ՀՀ Շիրակի մարզի «Երազգավորսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

/2023-2028թթ./

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Զարգացման ծրագրի կառուցվածքային սխեման ……2

Զարգացման ծրագրի իրավական հիմքերը ……...2

Ներածություն ……..3

Հաստատության գործունեությունը ……4

Տվյալներ դպրոցի մասին ……..5

Հաշվետու ժամանակաշրջանի նյութատեխնիկական բազան……7
Իրավիճակի վերլուծությունը ……..11

Ուժեղ եվ թույլ կողմեր ……..16

Հաստատությունում առկա հիմնախնդիրները ……..……..25

Դպրոցում սահմանված նպատակների եվ խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների եվ միջոցառումների ժամանակացույց……26

Շենքային պայմաններ նյութատեխնիկական բազա……26

Կառավարման եվ խորհրդակցական մարմինները ……....30

Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ ……..33

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացում ……....37

Սովորողներին տրամադրած կրթության որակը ……40

Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները եվ կիրառվող նորարարությունները……45

Ուսումնական միջավայր……48

Կրթական գործընթաց……53

Ռիսկեր …….....55

Վերահսկողության մեխանիզմները …….....58

Զարգացման ծրագրի իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույց ……..66

Վերջաբան …….……78

Սույն զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը հաստատելու մասին» N 35-Ն հրամանի պահանջներին համապատասխան

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍԽԵՄԱՆ

1. Հաստատության գործունեությունը:
2. Իրավիճակի վերլուծությունը. ուժեղ և թույլ կողմեր:
3. Նպատակների և խնդիրների սահմանում:
4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը:
5. Պատասխանատուները:
6. Արդյունքների գնահատման չափանիշները:
7. Ռիսկերը:
8. Գործընթացի կազմակերպման անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները:
9. Վերահսկողության մեխանիզմները:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը»
2. «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի պետական ծրագիրը հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագիր
3. « Կրթության մասին» ՀՀ օրենքը
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը
5. «ՊՈԱԿ-ի մասին» ՀՀ օրենքը
6. «Ուսումնական հաստատության կանոնադրությունը»
7. «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի Կոնվենցիան
8. «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքը
9. «Լեզվի մասին» ՀՀ օրենքը
10. «Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքը
11. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքը
12. «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքը

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհի երկրների հասարակական զարգացման համընդհանուր միտումները նշանակալիորեն բարձրացրել են կրթության սոցիալական նշանակությունը՝ այն կապելով մարդկության ճակատագրի հետ:

Սոցիալական և տնտեսական բարեփոխումները աշխարհում փոխեցին նաև մարդու անհատական որակների նկատմամբ հասարակական պահանջները: Դպրոցի ուսումնադաստիարակչական, կրթական խնդիրներն ավելի են դժվարանում, դառնում ավելի ինտելեկտուալ և բազմազան, իսկ մարդը, գործ ունենալով բարդ ու փոփոխվող տեխնիկայի և տեխնոլոգիական գործընթացների հետ, կարիք է զգում համապատասխան նոր գիտելիքների: Գիտելիքների անընդհատ թարմացման պահանջ է առաջանում: Հասարակության մեջ առանձնանում են աշխատող մարդու նկատմամբ հետևյալ հիմնական պահանջները.

ա. ընդհանուր զարգացման բարձր մակարդակ,

բ. քննադատական մտածողություն և որոշումները ինքնուրույնաբար ընդունելու ունակություն,

գ. նոր գիտելիքներ ձեռք բերելու ցանկություն և ընդունակություն,

դ. կոլեկտիվում աշխատելու հմտություն,

ե. նորարար մոտեցումների ընկալման տոլերանտության զարգացում:

Անձի այսպիսի որակների դաստիարակման գործում առաջնահերթ դերը պատկանում է կրթությանը, դպրոցին:

Կրթության ժողովրդավարացումը 20-րդ դարի վերջերին կրթության կարևոր սկզբունքներից է, որն ամրագրվել է բազմաթիվ երկրների նորագույն օրենսդրությունների մեջ: Կրթության որակի բարձրացումը, ուսուցման և կյանքի միջև եղած կապի ամրապնդումը, սովորողների դաստիարակումը բարձր քաղաքացիական, սոցիալական, բարոյական և գեղագիտական արժեքներով՝ ահա այս խնդիրներն էին առաջնահերթ նշանակություն ստանում:

Սովորողների նպատակաուղղված դաստիարակության մեջ հիմնական դերը պետք է հատկացվի կրթական համակարգին: Դաստիարակության կատարելագործման հիմնական ուղղությունն է կրթության գործընթացի մարդասիրական բնույթի ապահովումը, որը թելադրվում է քաղաքակրթության կողմից: Դեռևս 1978 թվականին Յունեսկոն մշակել է

դրույթներ՝ սովորողներին դաստիարակելու խաղաղության և փոխըմբռնման հասնելու ոգով:

Համաշխարհային կրթակարգի զարգացման ժամանակակից միտումները վերաբերում են թե՛ ուսուցման, թե՛ դաստիարակության հիմնախնդիրների պարզաբանմանը և դրանց լուծման ուղիների որոնմանը:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր պետության կայացման կարևորագույն հիմքերից մեկը կրթության բնագավառում պետական քաղաքականությունն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: Նշյալ գործընթացի կազմակերպման հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որն առաջարկում է կրթության ոլորտի բարեփոխումներ, որոնք հնարավորություն են տվել լուծելու համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնելու իրավիճակը և նախադրյալներ ստեղծելու զարգացման համար: Ինչպես աշխարհի բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում որպես կրթության բնագավառի գերխնդիր կարևորվում է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին ու ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար հնարավորությունը, ինչը պայմանավորված է կառավարության որդեգրած քաղաքաքականությամբ՝ այն է՝ հանրակրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը: Հետևաբար այն խիստ արդիական է, քանի որ իր վրա է վերցնում հարափոփոխ և սրընթաց զարգացող աշխարհի պահանջներին համապատասխան մարդու և քաղաքացու ձևավորման ողջ պատասխանատվությունը:

Նշյալ գործընթացի ապահովման համար ուսումնական հաստատության մանկավարժական հանրույթից պահանջվում է լուրջ և նպատակաուղղված աշխատանք ու ժամանակ, իսկ ղեկավար կազմից՝ կառավարչական հմտություններ և ղեկավարման

ժողովրդավարական մոտեցումներ: Ուստի անհրաժեշտություն է առաջանում պլանավորել դպրոցի զարգացման ծրագիրը առաջիկա հինգ տարիների կտրվածքով՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ դպրոցի հիմնական առաքելությունը ոչ միայն շրջանավարտներին որակյալ կրթություն և մասնագիտական կողմնորոշում ապահովելն է, այլ քաղաքացիական հասարակությանը պիտանի, դաստիարակված անձնավորություն տալը՝ միջնակարգ կրթության՝ ՀՀ հանրակրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան:

Այդ նպատակով մեր առաջնահերթ նպատակն է ապահովել և իրականացնել դպրոցի հիմնական **առաքելությունը**.

1. Նորարարական և երեխայակենտրոն ուսումնական հաստատության կայացումը,
2. Սովորողների արժեքային համակարգի ձևավորումն ու զարգացումը,
3. Բովանդակային կրթություն իրականացնելու գործը,
4. Սովորողների հոգևոր արժեքների, հասարակական համակեցության, համագործակցային, հանդուրժողականության ու ինքնադրսևորման որակների զարգացումը,
5. Համընդհանուր ներառական կրթության իրականացումը,
6. Կարողունակ անձնավորության ձևավորումը:

Այս ամենն իրականացնելիս առաջնորդվելու ենք մեր որդեգրած հիմնական **սկզբունքներով**՝ մարդասիրություն, համագործակցություն, համակարգվածություն, անհատականություն, ներդաշնակություն, թափանցիկություն, քաղաքացիական գիտակցություն, ստեղծագործելու ունակություն:

ՏՎՅԱԼՆԵՐ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Շիրակի մարզի «Երազգավորսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ Դպրոց/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական նախադպրոցական, տարրական, հիմնական ընդհանուր, և ավագ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հասատատություն է:

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության /այսուհետ՝ Հիմնադիր/:

1 ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժնում գրանցվել է 2003թ., /գործունեության ժամանակահատվածը՝ անժամկետ/.

2 Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի հրամանի՝ տրված է լիցենզիա.

3 Դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը՝

- Նախադպրոցական /լիցենզիա Ա №0311/, սահմանային թիվը՝ 25.
- Տարրական ընդհանուր /լիցենզիա Ա №0544,/ սահմանային թիվը՝ 84.
- Հիմնական ընդհանուր /լիցենզիա Ա №0533/, սահմանային թիվը՝ 90.
- Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթական գործունեություն /լիցենզիա Ա №0435/, սահմանային թիվը՝ 60.
- Դպրոցում աշխատում են 37 աշխատակից, որից՝ 3 վարչական, 25 մանկավարժական, 9 ուսումնաօժանդակ և սպասարկող աշխատակիցներ:

4 Դպրոցում առկա են.

1) Դասասենյակ- 12,
2) Ճաշարան, գրադարան, լաբորատորիա -1, 1, 1
3) Մարզադահլիճ -1,
4) Համակարգչային կաբինետ-1,
5) ՆԶՊ դասասենյակ -1:

5 Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Երազգավորս, 4-րդ փողոց, 50 շենք:

6 Դպրոցը հիմնադրվել է 1924թ.:

7 Դպրոցը շենքը կառուցվել է 2000թ.:

8 Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր, շտամպ և այլ միջոցներ:

9 Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

10 Դպրոցը աշխատում է 5-օրյա աշխատանքային շաբաթով:

11 Դպրոցն ունի նախակրթարան:

12 Դպրոցն ունի կաթսայատուն /չի գործում/:

Դպրոցի խորհրդակցական մարմիններն են՝

- մանկավարժական խորհուրդ- ընդգրկված են բոլոր մանկավարժական աշխատողները և ծնողական խորհրդի նախագահը,

- աշակերտական խորհուրդ -ընդգրկված են 6-12-րդ դասարաններից մեկական սովորող,
- ծնողական խորհուրդ- ընդգրկված են դպրոցի 1-12-րդ դասարանների ծնողական խորհուրդների նախագահները:

01.11.2023թ-ի դրությամբ դպրոցում սովորում են 202 աշակերտներ՝ ընդգրկված 12 դասարաններում և 8 սան՝ նախակրթարանում:

ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Անվանում	Քանակ/ հատ
Նվագարկիչ Panasonic SA-VK650	1
Նվագարկիչ LG LX-D5230	1
Համակարգիչ "Պենդիում 4" 3 GHz RAM 256 MB	4
այդ թվում	
Համակարգչային բլոկ Pentium 4	4
Մոնիտոր Samsung 793MB	4
Համակարգիչ "Պենդիում 4" 3 GHz RAM 512 MB	1
այդ թվում	
Համակարգչային բլոկ Pentium 4	1
Մոնիտոր Samsung 997MB	1
Համակարգիչ i3 2100 CPU 3.10 GHz	1
այդ թվում	
Համակարգչային բլոկ HP Core i3 2100	1
Մոնիտոր HP compac LE2002	1
Բազմաֆունկցիոնալ սարք HP LaserJet 1536dnf MFP	1
Անխափան սնուցման սարք Tripplite AVR X750U	1
Սկաներ HP Scanjet 3800	1
Պրոյեկտոր Acer PD115	1
Հոսանքի սնուցման սարք Mercury 650	1
Լազերային տպիչ SAMSUNG ML2570	1
ՀԱԲ D-Link DES-1016D	1
Հեռախոս EUROTEL KX-T8416CID	1
DVD նվագարկիչ KENUO KN-660A2D	1
DVD նվագարկիչ SONY DVP-NS57P	1
Հեռուստացույց ARAY ACT-21D33	1
Հեռուստացույց ORVICA OR-21PFS30P	1
Փափուկ կահույք	1
այդ թվում	
բազմոց	1
բազկաթոռ	2
Բազկաթոռ	1
Բազկաթոռ	1
Գրասեղան	1

Գրապահարան	1
Պահարան	3
Պահարան	3
Գրատախտակ	1
Գրատախտակ	1
Գորգ 2x3	1
Գորգ 4x3	1
Լաբորատոր սարք	1
այդ թվում	
Ազատ անկման սարք	1
Պոմպ վակուումային էլեկտրական շարժաբերով (լաբորատոր)	1
Էներգիայի փոխակերպման սարք	1
Օպտիկական երևույթների դիտարկման սարք	1
Հոսանքի աղբյուր ELWE CP3A	1
Լույի ինտերֆերնցի և դիֆրակցիայի ցուցադրման սարք	1
Գծային ընդարձակումը ցուցադրելու սարք	1
Գեներատորի մոդել	1
Էլեկտրակիր մեքենա	1
Մարդու կմախքի մոդել (փոքր)	1
Մարդու ներքին օրգանների մուլյաժ	1
Գիբոնի գանգ	1
Օրանգուտանի գանգ	1
Պիթեկանտրոպի գանգ	1
Նեանդերթալցու գանգ	1
Հնագույն մարդու գանգ	1
Ժամանակակից մարդու գանգ	1
Ատամի մոդել	3
Աչքի մուլյաժ	1
Սրտի մուլյաժ	1
Երիկամի մուլյաժ	1
Ուղեղի մուլյաժ	1
Ուսագոտու ոսկրերի մուկլյաժ	1
Կոկորդի մուլյաժ	1
Ձեռքի մուլյաժ	1
Ոտնաթաթի մուլյաժ	1
Ձեռքի ջլերի և ոսկրերի միացման մուլյաժ	1
Կոնքագոտու մուլյաժ	1
Մաշկի մուլյաժ	1
Ականջի մուլյաժ	1
Կրծքավանդակի օրգանների մոդել	1
ԴՆԹ-ի երկպարույր շղթա	1
Մանրադիտակ	2
Երկրակեղևի կառուցվածք	1
Ռելիեֆ	1
Շախմատի սեղան, աթոռ	12
այդ թվում	
սեղան շախմատի	12

աթոռ	24
Խաղային կլոր սեղան	2
Կախիչ	1
Կրակմարիչ	3
Կրակմարիչ	2
Աշակերտական սեղան-նստարան	140
այդ թվում	
սեղան աշակերտական	140
նստարան աշակերտական	140
Աշակերտական սեղան /կանաչ/	6
Աշակերտական աթոռ /կանաչ/	12
Աշակերտական սեղան /մաշկագույն/	3
Աշակերտական աթոռ /մաշկագույն/	6
Ուսուցչի սեղան	11
Ուսուցչի սեղան	3
Ուսուցչի սեղան	1
Ուսուցչի սեղան	1
Ուսուցչի աթոռ	1
Ուսուցչի աթոռ	3
Ուսուցչի աթոռ	1
Փափուկ աթոռ	10
Չհրկիզվող պահարան	2
Դիմանկար	8
Շերտավարագույր	1
Կաթսա ջրատաքացուցիչ	1
Գազայրիչ JPE 80/2	1
Ընդարձակման բաք	2
Ջրի պոմպ Pedrollo HFm/5b	1
Էլեկտրական ջեռուցիչ	14
էլեկտրական լար	26
Պլիտա գազով	1
Պահարան մետաղյա	2
Լվացարան	1
Սառնարան	1
Էլեկտրական ջեռուցիչ դուխովկա	1
Էլեկտրական սալօճախ	1
Կշեռք	1
Արեստոն	1
Սեղան ներժից	1
Էլեկտրական թեյնիկ 30լ	1
Սեղան	1
Կախիչ	1

մարմնամարզ. ներքնակ	6
Պտտաձող	1
Մարմնամարզական պարան	1
Բարձրացատկի ձող	1
Մարմնամարզական պատ	2
Մարմնամարզական կամրջակ	1
Տեսահսկման համակարգ	1
Ջերմաչափ	2
Էլեկտրական պտուտակիչ	1
Պլանշետ	1
Դյուրակիր համակարգիչ Acep Aspire A315-56	1
Պրոյեկտոր Optoma w381	1
Ուժեղացուցիչ	1
Խոսափող	1
Խոսափող	1
USB նվագարկիչ KT5626	1
Տաքացուցիչ luxell	5
Տաքացուցիչ luxell	12
Սեղան ճաշարանի	12
Աթոռ ճաշարանի	50
Դարակաշար	1

Գույքացուցակը տեղադրվում է որպես հիմք մեր կատարած վերլուծության համար: Այն է. առկա նյութատեխնիկական բազան բավարար է ուսումնական պրոցեսի կազմակերպման մինիմալ պահանջների բավարարման համար: Ստորև մենք ավելի մանրակրկիտ կանդրադառնանք ունեցած հնարավորություններին, դրանց ուժեղ և թույլ կողմերին, **բայց մի շատ կարևոր հանգամանք չպետք է մոռանալ, որ ամենաքիչ պայմանների առավել արդյունավետ օգտագործումը կբերի ցանկալի նպատակների իրագործմանը և հակառակը, գիտության վերջին խոսքով հագեցված նյութատեխնիկական բազայի անարդյունավետ օգտագործումը երբեք չի տա ցանկալի արդյունք, կլինի պետական միջոցների անտեղի վատնում:** Ուստի դպրոցի զարգացումը մենք տեսնում ենք հնարավոր և իրագործելի՝ անկախ խոչընդոտող բոլոր հանգամանքներից: Այն իրագործելու համար պետք է **կամք, աշխատասիրություն և հետևողականություն**:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

2018-2023թթ-ի հաստատված ֆինանսատնտեսական հաշվետվությունների և այլ փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա կատարել ենք դպրոցի վերոնշյալ ժամանակահատվածի գործունեության ամփոփ վերլուծություն.

Գծապատկեր 1.



Գծապատկեր 2.



Վերլուծությունը ցույց է տալիս, որ հինգ տարվա միջին հաշվարկով պետական բյուջեից ստացված ֆինանսավորման 91.4%-ը բաժին է հասնում աշխատավարձին, 3.1%-ը՝ ջեռուցման և կոմունալ ծախսերին, 3%-ը՝ սննդին: Բյուջեի միայն 2.5%-ն է ուղղվում դպրոցի կարիքների համար մնացած ծախսերին:

Դպրոցի ֆինանսավորման աղբյուրը, մինչև 01.09.2023թ-ը, պետական բյուջեից հատկացված սուբսիդիան է՝ ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվից /տե՛ս գծապատկեր 1,2/: Նոր ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 07.12.2022թ-ի թիվ 79-Ն <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատելու մասին>> հրամանով:

Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 07.12.2022թ-ի թիվ 79-Ն հրամանի, կառավարման նոր համակարգին անցած դպրոցների ֆինանսավորման մեջ առանձնացրել են *կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացում խելամիտ հարմարեցումներ ապահովելու նպատակով տրամադրվող նպատակային ֆինանսավորումը, լաբորատորիաների ապրանքների և նյութերի համար նախատեսված ծախսերը* և այլ ծախսերի համար նախատեսված ֆինանսական միջոցներ, որոնց ճիշտ և արդյունավետ օգտագործումը կնպաստի որակյալ ուսումնական գործընթացի կազմակերպմանը: Ճիշտ է, կառավարման նոր համակարգին անցած դպրոցներում ֆինանսատնտեսական մասը ղեկավարում է վարչատնտեսական մասի համակարգողը, սակայն ուսումնական նպատակով կատարվող ծախսերի մասով պլանավորումը պետք է կատարի տնօրենը:

Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածության գործակիցը 19.4 ժամ է: Մեկ ուսուցչին բաժին է ընկնում 10 աշակերտ: Ուսուցիչների միջին տարիքը 53 է /տե՛ս գծապատկեր 3, 4/:

Գծապատկեր 3.



Գծապատկեր 4.



Կատարել ենք վերլուծություն նաև աշակերտների առաջադիմության, օլիմպիադաներին մասնակցության և բուհերում կրթությունը շարունակելու վերաբերյալ /տե՛ս գծապատկեր 5, 6, 7/:

Գծապատկեր 5.



Գծապատկեր 6.



Նախորդող հինգ տարիների միջին հաշվարկով աշակերտների ընդհանուր թվի 28.1%-ը մասնակցել է առարկայական օլիմպիադաներին:

Գծապատկեր 7.



Նախորդող չորս տարիների 35 շրջանավարտներից 25-ը ընդունվել և ուսումը շարունակում են հանրապետության տարբեր բուհերում /շրջանավարտների ընդհանուր թվի 71.4%- ը/:

Համընդհանուր ներառական կրթության իրականացման նպատակով ընդունվել են աշխատանքի հոգեբան, ուսուցչի օգնականներ: Կատարվել է դպրոցական և տարածքային մակարդակի գնահատում Արթիկի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի /ՏՄԱԿ/, դպրոցի բազմամասնագիտական թիմի և մանկավարժների կողմից: Վկայագրվել են ութ աշակերտներ, մեկը ինտելեկտուալ /մտավոր/ խորը խանգարումներով, երկուսը ինտելեկտուալ /մտավոր/ միջին խանգարումներով, մեկը ձայնի և խոսքի ֆունկցիաների միջին խանգարումներով, երկուսը ինտելեկտուալ /մտավոր/ թեթև խանգարումներով և երկու սովորող՝ ձայնի և խոսքի ֆունկցիաների թեթև խանգարումներով: Վերոհիշյալ բոլոր սովորողների ուսուցումը իրականացվել է ԱՈՒՊ-ներով:

2022-2023 ուսումնական տարում օրենսդրական փոփոխությունների հետ կապված՝ կատարվել է կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող բոլոր սովորողների վերագնահատում, որի արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքները գնահատվել են ըստ աստիճանների. 4-րդ աստիճանի՝ 2 սովորող, 2-րդ աստիճանի՝ 2 սովորող և 1-ին աստիճանի՝ 3 սովորող:

ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Դպրոցի զարգացման համար նախատեսված նպատակներն ու խնդիրները վեր հանելուց առաջ անհրաժեշտ է կատարել իրավիճակի վերլուծությունը, նշել ուժեղ և թույլ կողմերը: Սա մեր կողմից կատարված ստույգ վերլուծություն է, քանի որ նախորդ տասը տարիների ընթացքում եղել ենք սույն ՊՈԱԿ-ի տնօրենը և մեր հետևողական աշխատանքի շնորհիվ է, որ դպրոցն ունի ներքոհիշյալ ուժեղ կողմերի գերակշիռ մասը:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	**ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ**
• Դպրոցը երկհարկանի է, կառուցվել է 2000թ-ին և ունի բավարար շենքային պայմաններ, ունի պահուստային ելքեր, թեքահարթակ, դռներն ու պատուհանները փոխվել են 2022թ-ին: 10 դասասենյակներ ամբողջովին վերանորոգված են, ունի նաև կաթսայատուն: • Դպրոցն ունի սպորտդահլիճ /300 քառ. մետր/ ճաշարան, խոհանոց, ՆԶՊ դասասենյակ, «Արմաթ» լաբորատորիա, ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատորիա, գրադարան: • 21600 քառ. մետր տարածքն առանձնացված է ցանկապատով, տարածքն ունի սպորտհրապարակներ /վոլեյբոլի և ֆուտբոլի/, խաղահրապարակ,	• Դպրոցի լոկալ ջեռուցման համակարգը ամբողջովին հին է և ենթակա է փոփոխման: Կաթսայատունը չի գործում: Համայնքը գազաֆիկացված չէ: • Շենքն ունի կոսմետիկ վերանորոգման կարիք: • Դասասենյակների և երկրորդ հարկի միջանցքի մանրահատակը ենթակա է փոխման: • Չունի նկուղ և հրաձգարան: • Սպորտդահլիճը չունի հանդերձարաններ: • ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատորիան տեղակայված է մեկ սենյակում: • Չկա ընթերցասրահ: • Ցանկապատն ունի մասնակի վերանորոգման կարիք: • Դասասենյակների քանակը քիչ է, ինչը թույլ չի տալիս որոշ ծրագրեր

արհեստական խոտածածքով մինի ֆուտբոլի դաշտ /42x22/ : • Դպրոցն ունի արևային էլ. կայան 30 ԿՎ հզորությամբ և ջերմատուն /300 քառ. մետր/, շուրջօրյա վերահսկման տեսանկարահանող համակարգ:	իրագործել, /ռեսուրս սենյակ, բազմամասնագիտական խմբի համար աշխատասենյակ և այլն/: • Դպրոցը չունի զինանոց և ուսումնական զենք:
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	**ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ**
• Դպրոցն ապահովված է բավարար քանակությամբ սեղան-նստարաններով • Ունի դյուրակիր համակարգիչ և պրոյեկտոր • Ճաշարանը կահավորված է: ՀՀ կառավարության 2023թ-ի ապրիլի 27-ի 627-Ն որոշման համաձայն դպրոցը ստացել է ֆինանսավորում ճաշարանի գույքը և սպասքը թարմացնելու նպատակով: 1333000 ՀՀ դրամ կապիտալ ծախսերի մասով և 993088 ՀՀ դրամ ընթացիկ ծախսերի մասով: 01.11.2023թ-ի դրությամբ ձեռք է բերվել ճաշարանի սեղաններ, աթոռներ, դարակաշար, սպասք և խոհանոցի համար անհրաժեշտ այլ պարագաներ: • Գրադարանը հագեցված է գեղարվեստական գրականությամբ, դասագրքերի քանակը բավարար է • Ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատորիայում	• Սեղան-նստարանները հին են և ենթակա են փոխման: • Սպորտդահլիճի պատուհանները ցանցապատ չեն, կա սպորտային գույքի կարիք: • Առկա համակարգիչների և համակարգչային սարքավորումների թիվը բավարար չէ: • Լաբորատորիայում առկա գույքի մեծ մասը հին է: • Չունի արհեստանոցներ և համապատասխան գույք:

առկա են որոշակի քանակությամբ լաբորատոր նյութեր, մուլյաժներ, մանրադիտակներ և այլ սարքավորումներ: • Ունի վեբ կայք https://yerazgavors.schoolsite.am/ և ֆեյսբուքյան էջ https://www.facebook.com/profile.php?id=100044703242759	
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	**ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ**
• Կառավարման միացյալ խորհուրդը /Բայանդուրի, Երազգավորսի և Բենիամինի միջնակարգ դպրոցների/ մշտապես գործում է դպրոցի կանոնադրությամբ և սահմանված կարգով՝ իրեն վերապահված գործառույթներին համապատասխան: Նրա գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը, խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում, պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին: • Մանկավարժական խորհուրդը համալրված է փորձառու և որակյալ մասնագետներով: Խորհուրդը ձևավորված է 28 մանկավարժներից և ծնողական խորհրդի նախագահից:	• Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ: • Կառավարման խորհրդի կազմը ձևավորելիս ծնողխորհուրդը հաշվի չի առնում իր կողմից առաջադրված անդամի կրթական ցենզը: • Ծնողխորհրդը նախաձեռնությունների հարցում պասիվ է : • Ծնողական ժողովներում ներկա են գտնվում հիմնականում մայրերը: • Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև թույլ է համագործակցությունը: • Առարկայական մասնախմբերը չեն համագործակցում հարևան դպրոցների մ/մ-ների հետ:

• Աշակերտական խորհուրդը ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները և օժանդակում դրանց իրագործմանը: Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացնում են հանդիպումներ սովորողների հետ և լուծում տալիս խնդիրներին: • Ծնողական խորհուրդը մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին: Սերտ համագործակցում է դպրոցի հետ: Ծնողական խորհուրդը դասարանական ծնողխորհուրդների աջակցությամբ կազմակերպում է բազում էքսկուրսիաներ, այցելություններ դեպի թանգարաններ և այլ միջոցառումներ: • Դպրոցում գործում են առարկայական 3 մասնախմբեր, որոնք ամիսը առնվազն մեկ անգամ զումարում են նիստեր և արդյունավետ կազմակերպում ուսումնադաստիարակչական աշխատանքերը:	

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	**ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ**
• Դպրոցն համագործակցում է ՀՀ կառավարության, ԿԳՄՍ նախարարության, Շիրակի մարզպետարանի, Ախուրյանի համայնքապետարանի, ԿՏԱԿ-ի ԿԶՆԱԿ-ի, ԳԹԿ-ի, Շիրակի պետական համալսարանի, «Այբ» կրթահամալիրի, ՄԱԿ-ի «Պարենի համաշխարհային ծրագրի», Արթիկի ՏՄԱԿ-ի, ԱԻՆ-ի, ՊՆ N զորամասի, մարզային գրադարանի, իրավապահ մարմինների, «Հայկական կարիտաս» ԲՀԿ-ի, Օքսվորդի հայկական հիմնադրամի, «Թումո» կենտրոնի, մեր դպրոցի շրջանավարտների և կրթական ծրագրեր իրականացնող տարբեր հասարակական կազմակերպությունների և անհատների հետ:	• Բարեգործական կազմակերպությունների հետ կապ, որոնք լուրջ ֆինանսական ներդրումներ կունենան դպրոցի շենքային պայմանների էական բարելավման և նյութատեխնիկական բազայի համալրման գործում:
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	**ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ**
• Դպրոցը, լինելով համայնքում միակը, բացի ուսումնական պլանով նախատեսված աշխատանքներից իր վրա է վերցրել համայնքի գեղագիտական զարգացման և	• Ուսումնական միջավայրն ավելի գրավիչ և արդյունավետ դարձնող շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի անբավարարություն:

կրթամշակութային կենտրոնի պարտականությունները: Այդ նպատակով իրականացվում են տարբեր ծրագրեր, որոնք լինելու են շարունակական: Ստեղծվել է համայնքի բնակիչների և սվորողների համար գրավիչ ուսումնական, սպորտային և գեղագիտական միջավայր ամբողջ տարվա ընթացքում: • Համագործակցելով «Հայկական կարիտաս» ԲՀԿ-ի և Օքսվորդի հայկական հիմնադրամի հետ՝ դպրոցն ամառային արձակուրդների ընթացքում իրականացրել է «Հասանելի գեղագիտական կրթություն հայկական գյուղական համայնքներում» ծրագիրը, որի շրջանակներում գործում են մի քանի խմբակներ /պար, արտթերապիա, նկարչություն/: • 2016թ-ից դպրոցում գործում է «Արմաթ» լաբորատորիան, որտեղ հաճախում և իրենց գիտելիքներն են զարգացնում դպրոցի աշակերտները: • Դպրոցն ունի «Գիրք և թեյ» գրական ակումբ:	• Դպրոցը չունի հանդիսությունների դահլիճ:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	**ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ**
• Դպրոցն համալրված է բարձրագույն կրթություն ունեցող որակյալ մանկավարժներով, ովքեր պարբերաբար մասնակցում են մասնագիտական որակավորումների համար կազմակերպվող սեմինարների, վեբինարների և ունեն համապատասխան վկայականներ, հավաստագրեր: Ուսուցիչների մեծ մասը ՏՀՏ են կիրառում դասապրոցեսին, կազմակերպում են փորձի փոխանակում դպրոցի մանկավարժների հետ: • Դպրոցում 2023-2024 ուստարվանից աշխատանքի են ընդունվել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, դոցենտի գիտական կոչում ունեցող և կամավոր ատեստավորում անցած 2 մանկավարժներ: • Հաճախակի են կազմակերպվում բաց դասեր՝ բազմազան մեթոդների, ՏՀՏ կիրառմամբ, լաբորատոր և գործնական աշխատանքների միջոցով: • Դպրոցում անցկացվում են բարձր որակի ռազմահայենասիրական միջոցառումներ և դասեր:	• Երկու մանկավարժներ ունեն միջին մասնագիտական կրթություն: • Կամավոր ատեստավորված և տարակարգ ունեցող մանկավարժների պակաս: • Ուսուցիչները դեռևս լիարժեքորեն չեն տիրապետում նոր ՀՊՉ-ին և դրանից բխող ծրագրային և մեթոդական փոփոխություններին: • Ուսուցիչների մի մասը վատ է տիրապետում ՏՀՏ-ներին:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
• Դպրոցի առաքելությունն է՝ ապահովել, որ յուրաքանչյուր սովորող լինի հասարակությանը պիտանի, ինքնուրույն կյանքին լիարժեք պատրաստված, արդյունավետ շարունակի կրթության հաջորդ աստիճանը և կարողանա անցնել արժանապատիվ աշխատանքային գործունեության: • Դպրոցն ապահովում է յուրաքանչյուր սովորողի կրթության և դաստիարակության հավասար իրավունքը: Լուրջ աշխատանք է կատարում ուսման որակը բարելավելու, աշակերտների կարողությունների, հմտությունների, արժեքների և դիրքորոշումները զարգացնելու, առողջության պահպանման և անվտանգ կենսագործունեությունը և ռազմահայրենասիրական, գեղագիտական, աշխատանքային, բարոյական դաստիարակությունն ամրապնդելու համար: • Ակտիվորեն մասնակցում է տարածքային և մարզային տարբեր սպորտային միջոցառումների:	• Հանրապետական օլիմպիադաներին մասնակցության բացակայություն: • Տեղեկատվական տեխնոլոգիաների ցածր կիրառումը ամենօրյա դասապրոցեսի ժամանակ: • Ներառական կրթության վերաբերյալ ծնողների և աշակերտների ոչ բավարար տեղեկացվածությունը:

• 2019թ-ից հաջողությամբ իրականացնում է ներառական կրթություն: • Դպրոցի կրթության որակի մասին է խոսում բուհ ընդունվողների մեծ թիվը /2018-2022թթ-ի ընթացքում 35 շրջանավարտներից 25-ն ընդունվել են հանրապետության տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ, 2—ը՝ ՄՄՈՒՀ/:	
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	**ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ**
• Դպրոցն ունի համակարգչային դասասենյակ: Առկա է ինտերնետ կապը: • «Արմաթ»լաբորատորիան ակտիվորեն գործում է՝ ներգրավվելով բազմաթիվ աշակերտների: • Ուսոցիչները դասերն անցկացնելիս օգտագործում են ՏՀՏ-ներ: • Վերապատրաստված, ատեստավորված ուսուցիչները դասերը կազմակերպում են ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներով՝ համատեղելով դրանք ավանդական տեխնոլոգիաների հետ:	• Համակարգիչների և համակարգչային տեխնիկայի խիստ պակաս կա: Ինտերնետ կապը հասանելի չէ դպրոցի ամբողջ տարածքում: • Ուսուցիչների մի մասը դժվարությամբ է ՏՀՏ օգտագործում: • Ուսուցիչների մի մասը պատրաստ չէ ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմանը կա՛մ մեթոդապես, կա՛մ հոգեբանորեն:

Դպրոցի 2023-2028 թվականների դինամիկ զարգացումն ապահովելու նպատակով կատարել ենք առկա իրավիճակի վերլուծություն և վեր հանել դպրոցում առկա հիմնախնդիրներն ըստ ոլորտների և սահմանել նպատակները: Նպատակներին հասնելու համար սահմանել ենք նաև ըստ ոլորտների գործողությունների և միջոցառումների ժամանակացույց /տե՛ս Ձև 1 աղյուսակը/, որտեղ ներկայացված են դպրոցի գործունեության հինգ տարիների հիմնական ուղղությունները, որից բխելու են 2023-2028թթ. յուրաքանչյուր ուսումնական տարվա համար նախատեսված ուսումնադաստիարակչական և մնացած տարեկան աշխատանքային պլանները: Մեկ ուսումնական տարվա գործողությունները, դրանց պատասխանատուներն ու կատարման ժամկետները մանրամասն ներկայացված են Ձև 3 աղյուսակում:



ԴՊՐՈՑՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2023-2028թթ

Ձև 1

1. ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ
Դպրոցի շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի վիճակի վերաբերյալ ամփոփ վերլուծություն կատարել ենք վերևում: Այս բաժնում կներկայացնենք շենքի վերանորոգման, տարածքի խնամքի և նյութատեխնիկական բազայի թարմացման ուղղությամբ նախատեսվող գործողությունները:
Նպատակ Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի (ֆիզիկական միջավայր և նյութատեխնիկական բազա) ապահովում:
Խնդիր 1. Ապահովել բարեկարգ ֆիզիկական միջավայր: 2. Ստեղծել բարենպաստ պայմաններ առողջության պահպանման և ֆիզիկական զարգացման համար: 3. Համալրել նյութատեխնիկական բազան: 4. Դպրոցի կրթական պահանջներին համապատասխանացնել գործող կաբինետները:
Գործողություններ /մշտական, հստակ ժամանակացույց չպարունակող/ 1. Հետևողական լինել դպրոցը պետական ծրագրով վերանորոգվող դպրոցների շարքում ընդգրկելու գործին: 2. Խնդիրը ներկայացնել լիազոր մարմին:

3. Հնարավորության դեպքում առաջնահերթ բարեկարգել առավել անմխիթար տարածքները /օրինակ՝ դասասենյակների հատակները, միջանցքները, սանհանգույցները և այլն/:

4. Հետևել լուսավորության ապահովմանը:

5. Ապահովել մաքրությունը և օդափոխությունը:

6. Կազմակերպել սանիտարական օրեր:

7. Բարելավել ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար անհրաժեշտ պայմանները:

8. Դպրոցամերձ տարածքները բարեկարգել և կանաչապատել սովորողների և ծնողների աջակցությամբ:

9. Գրադարանը պարբերաբար համալրել անհրաժեշտ գրականությամբ:

Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ և միջոցառումներ	**Միջոցները և նյութատեխնիկական պարագաները**	**Պատասխանատուներ**	**Ժամանակացույց**
1.1 Դպրոցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ	ՊՈԱԿ-ի բյուջե, արտաբյուջետային միջոցներ /արևային կայանից և ջերմատնից ստացված ֆինանսներ/	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող	2023-2028թթ
1.2 Ջեռուցման համակարգի փոփոխում	Պետական բյուջե	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող	2023-2026թթ
1.3 Տարածքի բարեկարգում	ՊՈԱԿ-ի բյուջե, արտաբյուջետային միջոցներ /արևային կայանից և ջերմատնից ստացված ֆինանսներ/	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող, ՄԿԱ գծ. համակարգող, դասղեկներ	2023-2028թթ

	Մարդկային ռեսուրսներ		
1.4 Խոհանոցային գույքի ձեռքբերում	ՀՀ կառավարության 2023թ-ի ապրիլի 27-ի 627-Ն որոշման հանրակրթական դպրոցներում կապիտալ ծախսեր իրականացնելու նպատակով՝ «Հանրակրթության ծրագիր» ծրագիրով:	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող	Մինչև 2023թ-ի դեկտեմբեր
1.5 Բարեկարգել ռազմագիտության կաբինետը, ստեղծել ուսումնական զենքի համար նախատեսված սենյակ:	ՊՈԱԿ-ի բյուջե, արտաբյուջետային միջոցներ /արևային կայանից և ջերմատնից ստացված ֆինանսներ/	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող	2023-2026թթ
1.6 Ձեռք բերել նոր սերնդի համակարգիչներ և լաբորատոր գույք:	ՊՈԱԿ-ի բյուջե, արտաբյուջետային միջոցներ /արևային կայանից և ջերմատնից ստացված ֆինանսներ/	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող	2023-2028թթ
<u>Արդյունքների գնահատման չափանիշները.</u> • ուսումնական հաստատության տարածքը մաքուր է, իսկ լաբորատորիաներում օգտագործվող այրվող և այլ վտանգավոր նյութերի թափոնները, աղբը կանոնավորապես հավաքվում են հատուկ աղբարկղերում և դուրս են բերվում հաստատության տարածքից,			

- ուսումնական հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմերին,
- շենքը հարմարեցված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին (թեք հարթակներ, լայն դռներ և այլն),
- ուսումնական հաստատության բոլոր դասասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, և ջեռուցման ամիսներին դասասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին,
- ուսումնական հաստատությունում ոչ կառուցվածքային վտանգներ չկան:

Ակնկալվող արդյունքը

Ունենալ.

Հրապուրիչ և որակյալ կրթական միջավայր, վերանորոգված և նյութատեխնիկական բազայով հագեցած առաջադեմ, մշակութային կենտրոն հանդիսացող դպրոց:

Արդյունքների գնահատման սանդղակ

Գործողություն	Կատարված է			
	0-25%-ով Անբավարար	25-50%-ով Բավարար	50-75%-ով Լավ	75-100%-ով գերազանց

2. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Դպրոցի զարգացման նպատակներից է կառավարման որակի բարձրացումը, որը կիրականացվի բոլոր շահառու կողմերի համագործակցության արդյունքում: Այդ համագործակցությունը դպրոցի կառավարումը կդարձնի առավել մասնակցային, թափանցիկ և արդյունավետ: Դրա համար անհրաժեշտ է ակտիվացնել կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեությունը և բարձրացնել դրանց դերն ու հեղինակությունը դպրոցում:

Նպատակ

Կառավարման և խորհրդակցական մարմինների ակտիվ համագործակցություն և գործունեության արդյունավետ ձևերի ու միջոցների ընտրություն՝ կրթության զարգացման ժամանակակից մոտեցումներին համապատասխան:

Խնդիր

1. Բարձրացնել կառավարման խորհրդի դերը դպրոցի հետ համագործակցության արդյունքում:
2. Գործնականում արդյունավետ իրականացնել մանկավարժական խորհրդի լիազորությունները:
3. Ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը:
4. Բարելավել ծնողական խորհրդի հետ համագործակցությունը:

Գործողություններ /մշտական, հստակ ժամանակացույց չպարունակող/

1. Խթանել կառավարման և խորհրդակցական մարմինների ներգրավվածությունը համադպրոցական բոլոր նախաձեռնություններում և աշխատանքներում:
2. Մանկավարժական խորհրդի աշխատանքերի կազմակերպումը ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան:
3. Ուսումնական պլանների, թեմատիկ պլանների և ԱՈՒՊ-ների ստեղծման գործընթացին ուսուցիչների և ծնողների ակտիվ մասնակցության ապահովում:

4. Ուշադրության կենտրոնում պահել մանկավարժական խորհրդի ընդունած որոշումների ճիշտ և ժամանակին կատարումը:
5. Ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորում:
6. Ծնողական խորհրդին ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում:
7. Ծնողների նախաձեռնությունները և մասնակցությունը ուսումնադաստիարակչական գործընթացին հրապարակել ֆեյսբուքյան էջում:
8. Ծնողական խորհրդի նիստում հանդես գալ առաջարկություններով, խթանել հետաքրքիր նախաձեռնությունների իրականացումը:
9. Ծնողների ներգրավվածությունը իրենց երեխաների ԱՈՒՊ-ների կազման, արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին:
10. Աջակցել աշակերտական խորհրդին՝ բարձրացնելու դպրոցի և իր կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները ակտիվ գործունեության վերածելու համար:
11. Կազմակերպել միջոցառումներ, հանդիպումներ, բանավեճեր, կլոր սեղաններ և մրցույթներ, որոնք նպատակաուղղված կլինեն աշակերտի ազատ մտածողության զարգացմանը, ինչպես նաև պատասխանատվության ձևավորմանը:

Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ և միջոցառումներ	**Միջոցները և նյութատեխնիկական պարագաները**	**Պատասխանատուներ**	**Ժամանակացույց**
2.1 Սահմանված ժամկետում կառավարման խորհրդի կազմում ընդգրկվելու նպատակով մանկավարժական և ծնողական խորհուրդների ներկայացուցիչների ընտրության ապահովում	ՀՀ օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր, մարդկային	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծ. համակարգող, դասղեկներ, կառավարման և	2023-2028թթ

2.2 ՀՀ օրենսդրության և գործող կարգերի համապատասխան ձևավորել դպրոցի խորհրդակցական մարմինները	ռեսուրսների ճիշտ օգտագործում	ծնողական խորհուրդների նախագահներ	2023-2028թթ օգոստոս – սեպտեմբեր ամիսներ
2.3 Շարունակել համագործակցությունը կառավարման և խորհրդակցական մարմինների հետ, ապահովել նաև այդ մարմինների փոխհամագործակցությունը			2023-2028թթ
2.4 Հետևել խորհրդակցական մարմինների գործառույթների պատշաճ կատարմանը, թափանցիկության ապահովմանը			2023-2028թթ
2.5 Հետևել ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան և ՆԴՎ պլաններով նախատեսված գործառույթների իրականացմանը:	Աշխատանքների պլանավորում	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծով համակարգող,	2023-2028թթ

<u>Արդյունքների գնահատման չափանիշները.</u>

- տնօրինությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը,
- աշակերտական խորհրդի գործունեության համապատասխանությունը ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին,
- ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը և դրանց ընթացքում քննարկված հարցերի շրջանակները,
- ծնողների ներգրավվածությունը սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում, ներգրավվածության ձևերը, նման աշխատանքներում ընդգրկված ծնողների տոկոսը,
- կառավարման և խորհրդակցական մարմինների ակտիվ համագործակցություն:

Ակնկալվող արդյունքը

Ունենալ.

Ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան խորհրդակցական մարմիններ, գործող կառավարման արդյունավետ համակարգ՝ ապահովելով մասնակցայնություն և հաշվետվողականություն:

Արդյունքների գնահատման սանդղակ

Գործողություն	Կատարված է			
	0-25%-ով Անբավարար	25-50%-ով Բավարար	50-75%-ով Լավ	75-100%-ով գերազանց

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Սովորողների հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացումը դաստիարակչական գործընթացի բաղկացուցիչ մաս է կազմում, քանի որ մեր երկրին անհրաժեշտ են զարգացած, ժողովրդավար, ազատ մտածողություն դրսևորող քաղաքացիներ:

Նպատակ

Սովորողների սոցիալականացման ապահովում:

Խնդիրներ

1. Ձևավորել քաղաքացիական հասարակության ակտիվ և հայրենասեր քաղաքացի:
2. Համագործակցել տարածքային կառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ:
3. Համագործակցել կրթական հաստատությունների, հանրակրթական դպրոցների հետ:

Գործողություններ /մշտական, հստակ ժամանակացույց չպարունակող/

1. Կրթության որակի արդյունավետությունը բարձրացնելու համար սահմանել համագործակցության բարձր նշաձող ոչ միայն ՀՀ կառավարության, ԿԳՄՍ նախարարության, Շիրակի մարզպետարանի, Ախուրյանի համայնքապետարանի, ԿՏԱԿ-ի, ԿՁՆԱԿ-ի, ԴՍԵԲ-ի, ԳԹԿ-ի և այլ պատկան մարմինների հետ, այլ նաև շարունակել խորացնել համագործակցությունը Շիրակի պետական համալսարանի, «Այբ» կրթահամալիրի, ՄԱԿ-ի «Պարենի համաշխարհային ծրագրի», Արթիկի ՏՄԱԿ-ի, ԱԻՆ-ի, ՊՆ N զորամասի, մարզային գրադարանի, իրավապահ մարմինների, «Հայկական կարիտաս» ԲՀԿ-ի, Օքսվորդի հայկական հիմնադրամի, «Թումո» կենտրոնի, մեր դպրոցի շրջանավարտների և կրթական ծրագրեր իրականացնող տարբեր հասարակական կազմակերպությունների և անհատների հետ:
2. Դպրոցի միջոցառումներին հրավիրել մարզային իշխանության անդամների , այդ թվում կրթական և հասարակական կազմակերպությունների ղեկավարներին:
3. Կազմակերպել էքսկուրսիաներ Հայաստանի պատմամշակութային վայրեր:

Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ և միջոցառումներ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Պատասխանատուներ	Ժամանակացույց
3.1 Կազմակերպել այցելություններ մարզային գրադարան, թանգարաններ, արվեստագետների արհեստանոցներ, ցուցահանդեսներ, պատկերասրահներ և այլ մշակութային կենտրոններ:	Բաժանորդային համակարգ, ծնողական ներդրումներ	ՄԿԱ գծով համակարգող, դասղեկներ, ծնողական խորհուրդ	2023-2028թթ
3.2 Մասնագիտական կողմնորոշման նպատակով կազմակերպել հանդիպումներ ԲՈՒՀ-երի մասնագետների հետ:	Մարդկային ռեսուրսներ, պրոյեկտորով կահավորված դասասենյակ	Տնօրեն, ՄԿԱ գծով համակարգող, դասղեկներ	2023-2028թթ
3.3 Մարզի դպրոցների հետ կազմակերպել մրցումներ տարբեր սպորտաձևերից /ֆուտբոլ, վոլեյբոլ և այլն/	Մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործում, աշխատանքների պլանավորում	Տնօրեն, տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով համակարգող, ֆիզկուլտուրայի ուսուցիչ, զինղեկ:	2023-2028թթ
3.4 Կրակային պատրաստության և <<հայրենիքի պաշտպանի>> կյանքին ծանոթանալու նպատակով այցելություններ զորամասեր:	Աշխատանքների պլանավորում, ծնողական ներդրումներ	Տնօրեն, ՄԿԱ գծով համակարգող, զինղեկ	2023-2028թթ
3.5 Ներառականության ճիշտ ընկալման նպատակով Արթիկի ՏՄԱԿ-ի հետ համագործակցության ընդլայնում:	Մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործում, աշխատանքների պլանավորում	Տնօրեն, տնօրենի տեղակալ, հոգեբան,	2023-2028թթ
3.6 Հետևել ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան և ՆԴՎ պլաններով նախատեսված գործառույթների իրականացմանը:	Աշխատանքների պլանավորում	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծով համակարգող,	2023-2028թթ

Արդյունքների գնահատման չափանիշները.

- Գրադարաններ, արվեստագետների արհեստանոցներ, ցուցահանդեսներ, պատկերասրահներ և զորամասեր այցելությունների, Հայաստանի պատմամշակութային վայրեր էքսկուրսիաների պարբերականությունը,
- ուսումնական հաստատության կողմից հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացված կրթական ծրագրերը, դրանց թիվը և մասնակից սովորողների թիվը՝ ըստ ծրագրերի.
- ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնանյութական բազայի համալրման և այլ աշխատանքներին համայնքի, ՀՀ կառավարության, ԿԳՄՍ նախարարության, Շիրակի մարզպետարանի, Ախուրյանի համայնքապետարանի մասնակցությունը, այդ գործում կատարված ներդրումները:

Ակնկալվող արդյունքը

Կզարգացնենք.

Սովորողների մոտ իրենց նախասիրություններին համապատասխան կարողություններ և հմտություններ:

Կունենանք.

Կարողունակ և մրցունակ քաղաքացի:

Արդյունքների գնահատման սանդղակ

Գործողություն	Կատարված է			
	0-25%-ով Անբավարար	25-50%-ով Բավարար	50-75%-ով Լավ	75-100%-ով գերազանց

4. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ
Դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության կենտրոնական դեմքն ուսուցիչն է, իսկ կրթակարգի ներդրման հաջողության հիմնարար գործոնը՝ ուսուցիչների մասնագիտական կատարելագործման արդյունավետ իրականացումը: Այսօր մեր հանրապետությունը թևակոխել է կրթության բովանդակային բարեփոխումների նոր փուլ: Փոփոխվել է նաև Հանրակրթության պետական չափորոշիչը /ՀՊՉ/, որը հիմնված է սովորողների հմտությունների և կարողունակությունների վրա: Կրթական քաղաքականությունը մեծացնում է ուսուցիչների պատասխանատվությունը: Մերօրյա ուսուցիչը իր գիտելիքները, վարպետությունը և կարողունակությունները հարստացնելու և արդիականացնելու խնդիրներ ունի, որպեսզի կարողանա գործունեության ընթացքում հավասարապես շեշտադրել սովորողների գիտելիքը, հմտությունը, դիրքորոշումը և արժեքային համակարգը:
Նպատակ Մանկավարժական համակազմի որակական բարելավում:
Խնդիրներ 1. Կազմակերպել ուսուցիչների ինքնազարգացմանն ուղղված աշխատանքներ: 2. Շարունակականորեն դասապրոցեսում ներդնել նորագույն տեխնոլոգիաներ և ժամանակակից մեթոդներ, բարելավել և արդիականացնել ուսուցիչների մասնագիտական որակները, կարևորել և զարգացնել մեդիագրագիտությունը: Բարձրացնել դասապրոցեսում ՏՀՏ-ների կիրառման կարողությունները և բոլոր ուսուցիչների համակարգչային գրագիտությունը: 3. Ուսուցիչների մոտ զարգացնել ներառական կրթության կազմակերպման գիտելիքները և հմտությունները: 4. Ապահովել առարկայական մասնախմբերի արդյունավետ աշխատանքը:

Գործողություններ /մշտական, հստակ ժամանակացույց չպարունակող/

1. Վարել ճիշտ կադրային քաղաքականություն:
2. Իրազեկել ուսուցիչներին կամավոր ատեստավորման դիմելու համար անհրաժեշտ քայլերի մասին:
3. Ուսումնասիրել ուսուցիչների կողմից ՏՀՏ կիրառումը դասապրոցեսի ընթացքում և ըստ կարողությունների և հմտությունների կազմել ՏՀՏ գիտելիքները խորացնելու աշխատանքի պլանավորում:
4. Իրականացնել դասալսումներ, դիտարկումներ, և քննարկումներ:

Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ և միջոցառումներ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Պատասխանատուներ	Ժամանակացույց
4.1 Ապահովել մանկավարժների պատշաճ մասնակցությունը պարտադիր ատեստավորմանը, տարաբնույթ վերապատրաստումներին, սեմինարներին և քննարկումներին՝ կազմակերպված ինչպես առկա, այնպես էլ հեռավար հարթակներում:	ՊՈԱԿ-ի բյուջե, Մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործում, աշխատանքների պլանավորում	Տնօրեն, տնօրենի տեղակալ	2023-2028թթ
4.2 Ապահովել ուսուցիչների և ուսուցչի օգնականների մասնակցությունը ԱՈՒՊ-ներ կազմելու և նպատակները ճիշտ սահմանելու նպատակով կազմակերպված վերապատրաստումներին:	Մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործում, աշխատանքների պլանավորում	ՏՄԱԿ, տնօրեն, տնօրենի տեղակալ	2023-2028թթ
4.3 Ուսումնանյութական բազայի պակասը համալրել համացանցից դուրս բերված նյութերով և դրանք	Համացանց, համակարգիչ, մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործում,	Տնօրեն, տնօրենի տեղակալ, էլեկտրոնային կառավարման	2023-2028թթ

համապատասխանաբար օգտագործել դասապրոցեսում:		և դասավանդման ապահովման մասնագետ	
4.4 Հետևել ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան և ՆԴՎ պլաններով նախատեսված գործառույթների իրականացմանը:	Աշխատանքների պլանավորում	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծով համակարգող,	2023-2028թթ

<u>Արդյունքների գնահատման չափանիշները.</u>

- նախարարության կողմից երաշխավորված կամ այլ կազմակերպություններում վերջին 3 տարում վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը և տոկոսը,
- տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը,
- գիտական կոչում ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը,
- ուսումնական տարվա ընթացքում հաստատությունում անցկացվող ցուցադրական բաց դասերի թիվը,
- ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչների փոխադարձ դասալսումների թիվը:

<u>Ակնկալվող արդյունքը</u>

Կունենանք.

Փորձառու, որակյալ և ճանաչված մասնագետներ, մոտիվացված մանկավարժներ, նորարար և ստեղծագործ ուսուցիչներ:
Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներ /ուսուցիչների 20%-ը/:
ՏՀՏ միջոցների լիարժեք ներդնում և կիրառում դասապրոցեսում:

<u>Արդյունքների գնահատման սանդղակ</u>

Գործողություն	Կատարված է			
	0-25%-ով Անբավարար	25-50%-ով Բավարար	50-75%-ով Լավ	75-100%-ով գերազանց

5. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ

Կրթական գործընթացում ամենօրյա զարգացումը անհրաժեշտ է և անխուսափելի, քանի որ մեր ապագա քաղաքացին պետք է կրթվի ու դաստիարակվի գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին համապատասխան և ստանա որակյալ կրթություն:

Նպատակ

Սովորողների կրթական կառուցվածքի և բովանդակության վերազինում, կրթության որակի ապահովում:

Խնդիրներ

1. Սովորողների կրթության իրավունքի իրացնել հանրակրթական պետական նոր չափորոշչին համապատասխան:
2. Ապահովել սովորողների կարողունակությունների զարգացումը կրթական ծրագրերի շրջանակներում:
3. Իրականացնել նորարարական ծրագրեր, ապահովել մեթոդական և դիդակտիկ նյութեր:
4. Ընդլայնել սովորողների մասնագիտական կողնորոշմանը միտված միջոցառումները: Հանրակրթության պետական չափորոշչային պահանջների նվազագույն շեմը չհաղթահարող աշակերտների համար կազմակերպել երկարօրյա ուսուցում:
5. Ձևավորել քննադատական և ստեղծագործական մտածողություն ունեցող քաղաքացի:

Գործողություններ /մշտական, հստակ ժամանակացույց չպարունակող/

1. Ուսուցման գործընթացին զուգահեռ ապահովել՝
    - հայրենասիրական,
    - մարդասիրական,
    - ֆիզիկական,

- գեղագիտական,
- մշակութային,
- աշխատանքային դաստիարակությունը՝ տարաբնույթ միջոցառումների օգնությամբ:

2. Լաբորատոր աշխատանքների կիրառման միջոցով ավելացնել գրավչությունը բնագիտական առարկաների նկատմամբ:
3. Անհատական ուսուցման կազմակերպում և վերահսկում:
4. Սովորողների մոտ զարգացնել հանրակրթական պետական չափորոշչով սահմանված կարողունակությունները.
    - լեզվական կարողունակություն և գրագիտություն,
    - սովորել սովորելու կարողունակություն,
    - ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,
    - ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,
    - թվային և մեդիա կարողունակություն,
    - մշակութային կարողունակություն,
    - մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակությունը,
    - տնտեսական կարողունակություն:

Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ և միջոցառումներ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Պատասխանատուներ	Ժամանակացույց
5.1 Սովորողներին ծանոթացնել քննադատական մտածողության և ճանաչողական մեթոդներին ու ձևավորել դրանք գործնականում կիրառելու	Մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործում,	Տնօրեն, տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով համակարգող,	2023-2028թթ

կարողություններ և հմտություններ գործնական աշխատանքների, մասնագիտական կողմնորոշման խմբակների և նախագծային աշխատանքների միջոցով:	աշխատանքների պլանավորում		
5.2 Սովորողների ֆիզիկական դաստիարակության բարելավման նպատակով կազմակերպել միջդասարանական, միջդպրոցական մրցումներ, սպորտլանդիաներ և աջակցել տարբեր մարզաձևերից ստեղծված խմբակների գործունեությանը:	Մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործում, աշխատանքների պլանավորում, ծնողական ներդրումներ	Տնօրեն, տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով համակարգող, ֆիզկուլտուրայի ուսուցիչ, զինղեկ:	2023-2025թթ
5.3 Կազմակերպել սանիտարական օրեր՝ աշակերտների մոտ աշխատանքային դաստիարակության բարձրացման նպատակով:	ՊՈԱԿ-ի բյուջե, աշխատանքների պլանավորում, մարդկային ռեսուրսներ	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող, ՄԿԱ գծով համակարգող, դասղեկներ	2023-2028թթ
5.4 Կազմակերպել երկարօրյա ուսուցում	ՊՈԱԿ-ի բյուջե, աշխատանքների պլանավորում, մարդկային ռեսուրսներ	Տնօրեն, ՄԿԱ գծով համակարգող, ուսուցիչներ	2023-2028թթ
5.5 Կազմակերպել քննարկումներ, բանավեճեր, ինտելեկտուալ խաղեր: Ստեղծել կոնֆլիկտային իրավիճակներ և սովորեցնել դրանք կառավարելու և լուծելու միջոցները:	Աշխատանքների պլանավորում, մարդկային ռեսուրսներ,	Տնօրեն, տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով համակարգող, հասարակագիտության ուսուցիչ	2023-2028թթ
5.6 Կազմակերպել գրական երեկոներ, գրքի ընթերցում և քննարկումներ «Գիրք և թեյ» գրական ակումբում:	Աշխատանքների պլանավորում, մարդկային ռեսուրսներ, ժամանակակից գեղարվեստական ստեղծագործություններ	Տնօրեն, տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով համակարգող, գրադարանավար:	2023-2028թթ

5.7 Հետևել ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան և ՆԴՎ պլաններով նախատեսված գործառույթների իրականացմանը:	Աշխատանքների պլանավորում	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծով համակարգող,	2023-2028թթ

<u>Արդյունքների գնահատման չափանիշները.</u>

- ուսումնական հաստատությունն ունի գործող գրադարան, որը հագեցած է ուսումնաօժանդակ գրականությամբ, գույքով և սարքավորումներով: Գրադարանից կանոնավոր կերպով օգտվում են սովորողները, ուսուցիչները և վարչական կազմը:
- ուսումնական հաստատությունն ունի ուսումնական լաբորատորիաներ ու կաբինետներ, այդ թվում՝ քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության, աշխարհագրության, ռազմագիտության, համակարգչային և այլն, ինչպես նաև արհեստանոցներ, մարզադահլիճ, միջոցառումների անցկացման դահլիճ և այլ հատուկ ուսումնական դասասենյակներ (սենյակներ), այդ թվում՝ արտադպրոցական կրթության և լրացուցիչ կրթական ծրագրերի համար (լուսանկարչական խմբակ, նկարչական խմբակ, երաժշտական խմբակ և այլն), որոնք հագեցած են անհրաժեշտ գույքով, ուսումնական պարագաներով, ուսումնանյութական և ուսումնադիդակտիկ նյութերով:
- սովորողների գիտելիքների, գործնական հմտությունների և կարողությունների ձեռքբերման, առարկայական ծրագրերի յուրացման, արժեքային համակարգի ձևավորման համար համապատասխան ուսումնանյութական միջավայրի ապահովումը:

<u>Ակնկալվող արդյունքը</u>

Կունենանք.

Առողջ մարմնով և առողջ հոգով սովորողների նախասիրություններին համապատասխան կրթություն, ապագա մասնագիտության ճիշտ կողմնորոշում և ընտրություն:

Մարզային օլիմպիադաներին մասնակցության մեծ ցուցանիշ:

Արդյունքների գնահատման սանդղակ

Գործողություն	Կատարված է			
	0-25%-ով Անբավարար	25-50%-ով Բավարար	50-75%-ով Լավ	75-100%-ով գերազանց

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Ուսումնական հաստատության արդյունավետ գործունեության իրականացման կարևորագույն նախապայմաններից են հաստատության կողմից օգտագործվող ժամանակակից տեխնոլոգիաների և տեխնիկական միջոցների ճիշտ ընտրությունը և կիրառությունը: Մեր հաստատությունում առկա են համապատասխան տեխնիկական միջոցներ՝ ՏՀՏ-ների օգնությամբ ուսուցումն իրականացնելու համար, ինչը կնպաստի առավել հետաքրքիր, գրավիչ և արդյունավետ կրթության կազմակերպմանը: Դպրոցում առկա հիմնախնդիրների լուծման կարևոր ուղիներից է մանկավարժական նոր, հատկապես համագործակցային, անձնային կողմնորոշում ունեցող տեխնոլոգիաների ներդրումը: Ուսուցման և դաստիարակության գործընթացների տեխնոլոգացումը կապվում է այնպիսի դիդակտիկ մոտեցումների որոնմանը, որոնք կարող են ուսուցումը վերածել ինքնատիպ արտադրական-տեխնոլոգիական գործընթացի՝ երաշխավորված արդյունքով: Անձնային կողմնորոշում ունեցող և համագործակցային տեխնոլոգիաները կրթական ողջ համակարգի կենտրոնում դնում են սովորողի անձը, նրա զարգացման համար հարմարավետ

պայմանների ապահովումը: Այս տեխնոլոգիաները բնութագրվում են մարդասիրական և հոգեբանավերականգնողական ուղղվածությամբ և հետապնդում են սովորողների ազատ, բազմակողմանի և ստեղծագործական զարգացման նպատակներ: Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները բացահայտում են այն նոր մոտեցումները, որոնք վերաբերում են մեր արդիականության մեջ ինչ և ինչպես սովորեցնելու խնդիրներին: Առաջին հերթին, ուսման բովանդակությունը դիտարկվում է որպես անձի զարգացման միջոց և ոչ թե սոսկ նպատակ, ակտիվորեն օգտագործվում են ուսուցման խթանման բոլոր հնարավոր միջոցները, տեղի է ունենում ուսուցման տարբերակվածություն՝ հենվելով գործունային մոտեցումներին և այլն:
Նպատակ Կրթական գործընթացում կիրառվող տեխնոլոգիաները, նորարարությունները, ժամանակակից տեխնիկական միջոցները ծառայեցնել կրթության որակի բարձրացմանը:
Խնդիրներ 1. Ուսումնադաստիարակչական գործընթացներում լայնորեն կիրառել ՏՀՏ, պրոյեկտոր և այլ տեխնիկական նորագույն միջոցներ՝ գործընթացը դարձնելով առավել հետաքրքիր ու գրավիչ: 2. Ուղղորդել և քաջալերել մանկավարժներին՝ կիրառելու ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները: 3. Տարածել մանկավարժական առաջավոր փորձը:
Գործողություններ /մշտական, հստակ ժամանակացույց չպարունակող/ 1. Անընդհատ մշտադիտարկում իրականացնել՝ ուսումնադատիարակչական գործընթացի արդյունավետությունն ու գրավչությունը ուսումնասիրելու նպատակով:

2. Հետևել, որ բոլոր մանկավարժներն անցնեն համապատասխան վերապատրաստումներ և, որ ավելի կարևոր է, վերապատրասումների արդյունքում ձեռքբերված գիտելիքները օգտագործեն պրակտիկ աշխատանքում՝ կիրառելով նոր, ժամանակակից տեխնոլոգիաներ՝ անհատական, համագործակցային ուսուցման, անձնային կողմնորոշում ունեցող և այլն:
3. Պարբերաբար դասալսումներ իրականացնել՝ հետևելով կրթական գործընթացի տեխնոլոգացմանն ու վերազինմանը,
4. Խրախուսել նորարարությունները, անցկացնել բաց դասեր, քննարկումներ, բանավեճեր:

Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ և միջոցառումներ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Պատասխանատուներ	Ժամանակացույց
6.1 Համալրել նյութատեխնիկական բազան դյուրակիր համակարգիչներով:	ՊՈԱԿ-ի բյուջե, արտաբյուջետային միջոցներ /արևային կայանից և ջերմատնից ստացված ֆինանսներ/	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող	2023-2028թթ
6.2 Համացանցը հասանելի դարձնել դպրոցի ամբողջ տարածքում:	ՊՈԱԿ-ի բյուջե, արտաբյուջետային միջոցներ /արևային կայանից և ջերմատնից ստացված ֆինանսներ/	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող	2024թ.
6.3 Ցուցաբերել օժանդակություն սկսնակ և տարեց մանկավարժներին:	Մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործում, աշխատանքների պլանավորում	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ ինֆորմատիկայի ուսուցիչ, էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ	2023-2028թթ

6.4 Ճիշտ օգտագործել ուսուցչի օգնականի ինստիտուտը	Մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործում, աշխատանքների պլանավորում	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ, ուսուցչի օգնականներ	2023-2028թթ
6.5 Հետևել ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան և ՆԴՎ պլաններով նախատեսված գործառույթների իրականացմանը:	Աշխատանքների պլանավորում	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծով համակարգող,	2023-2028թթ

Արդյունքների գնահատման չափանիշները.

- Դպրոցում առարկայական թեմատիկ, անհատական ուսուցման պանները մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի առնելով սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը,
- Դասերի օրվա թեմատիկ պլանավորման և իրականացման մեջ ներառվում են ՏՀՏ-ներ, տեխնիկական ժամանակակից միջոցներ ու մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ:
- Դասապրոցեսն ընթանում է ակտիվ, հետաքրքիր,
- Փոխադարձ դասալսումների, բաց դասերի քննարկումների արդյունքների վերլուծությունը կատարվում է՝ նպատակ ունենալով բարեփոխել կրթական միջավայրը:

Ակնկալվող արդյունքը

Կունենանք յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկություններին համապատասխան և սովորողների կրթական կարիքները բավարարող հաստատություն, որտեղ ամուր պահպանած են անցյալի լավագույն ավանդույթները և հաջողությամբ կիրառվում են ժամանակակից տեխնիկական միջոցներն ու տեխնոլոգիաները:

Արդյունքների գնահատման սանդղակ

Գործողություն	Կատարված է			
	0-25%-ով Անբավարար	25-50%-ով Բավարար	50-75%-ով Լավ	75-100%-ով գերազանց

7. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Ժամանակակից դպրոցում կրթական միջավայրի կազմակերպման և ստեղծման գործընթացը դպրոցի տնօրենի կառավարչական կարևորագույն գործառույթներից մեկն է: Ուստի ուսումնական հաստատությունում երեխայի միջավայրի հումանացման մանկավարժական առաջին պայմանը տնօրենի և մանկավարժական համայնքի նվիրվածությունն է երեխայի բարձրարժեքության և բացառիկության գաղափարին: Երեխան արժեք է, ոչ մի երեխա նման չէ մյուսին, յուրաքանչյուրն ինքնատիպ է, անկրկնելի, յուրահատուկ: Մանկավարժությունը պետք է պահպանի և պաշտպանի այդ առանձնահատկությունները: Հետևաբար կրթության կարևորագույն բաղադրիչներից մեկը ուսումնական միջավայրն է, որը նպաստում է կրթության որակի բարձրացմանը, սովորողի առողջության պահպանմանը, ֆիզիկական զարգացմանը:

Արդի պայմաններում ուսումնական բարենպաստ միջավայր ստեղծելու կարևոր հիմքերից մեկը ներառական կրթության կազմակերպումն ու իրականացումն է: Ներառական կրթությունը հատուկ կարիքներով երեխային հանրակրթական հաստատություն ընդունելու գործընթաց չէ միայն: Այն իրականացնելու համար, նախևառաջ, հարկավոր է հաշվի առնել և հիմնվել սոցիալական արդարության սկզբունքի վրա և վերացնել կրթական համակարգում առկա բոլոր տեսակի անհավասարությունները: Այն նաև, վերափոխելով նախկին

սկզբունքները և արժեքները, ենթադրում է արմատացած դպրոցական մշակույթի փոփոխություն՝ ներառական կրթություն իրականացնելու համար:

Այսօր արդեն ողջ աշխարհում ներառական կրթությունը, հանդիսանալով կրթության քաղաքականության զարգացման կարևորագույն ուղղվածություն, նպատակ է հետապնդում ընդլայնելու և զարգացնելու կրթության քաղաքականությունն ու փիլիսոփայությունն՝ առանձնահատուկ կարիքներով սովորողների կրթական կարիքների գնահատման, պլանավորման, վերահսկման և անհրաժեշտ հոգեբանամանկավարժական և վերականգնողական միջամտություն իրականացնելու միջոցով: Այդուհանդերձ, բոլոր սովորողների տարաբնույթ կրթական կարիքներին արձագանքելու և կրթական գործընթաց ներառելու համար բազմամասնագիտական միջամտությունը պահանջում է ներառական կրթության սկզբունքների և գաղափարախոսության հստակեցում և յուրաքանչյուր հասարակության մշակութային արժեհամակարգի պահանջներին համահունչ ներառական կրթության ներդրում՝ նպաստելու կրթահամակարգի բարեփոխմանը և կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցողների ինտեգրումը հասարակություն:

Կրթական միջավայրում պակաս կարևոր չէ բազմակարծիք և մասնակցային արժեքային միջավայրի ստեղծումը, որը թույլ կտա ապահովելու սովորողների կրթական, սոցիալական, առողջապահական շահերի և իրավունքների արդյունավետ պաշտպանությունը:

Ուսումնական միջավայրի մյուս կարևոր գերխնդիրը հանդուրժողականության, մարդասիրական մթնոլորտի հաստատումն է, որտեղ բացառված կլինեն բուլինգի, անհանդուրժողականության, խտրականության դեպքերը:

<u>Նպատակ</u>

Ստեղծել բազմակարծիք և մասնակցային արժեքային միջավայր՝ ապահովելով ուսումնական բարենպաստ կրթական տարածք բոլոր սովորողների համար՝ իրականացնելով համընդհանուր ներառական կրթություն:

Խնդիրներ

1. Խթանել սովորողների նախաձեռնությունները, օժանդակել դրանց իրագործմանը,
2. Սովորողներին մասնակից դարձնել իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի վերաբերյալ տնօրինության կողմից որոշումների ընդունմանը,
3. Ուսումնական միջավայրում հաշվի առնել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկություններն ու կարիքները, այդ թվում նաև հատուկ կարիքները:
4. Բացառել անհանդուրժողականության, բուլինգի դրսևորումները:

Գործողություններ /մշտական, հստակ ժամանակացույց չպարունակող/

1. Նպաստել յուրաքանչյուր սովորողի կրթական համակարգ ներգրավվելու, հարգված, պաշտպանված և սեփական ներուժերի հանդեպ վստահություն զգալու գործընթացին,
2. Խթանել յուրաքանչյուր սովորողի սոցիալական ներգրավվածությանը, ակտիվ մասնակցությանը կրթական գործընթացում, նպաստել սովորողների և նրանց հասակակիցների միջև դրական փոխհարաբերությունների ձևավորմանը, շփման կայացմանը դպրոցական միջավայրում՝ առաջնորդվելով մարդու հիմնարար իրավունքների, համոզմունքների և արժեհամակարգի վրա հիմնված սկզբունքներով:
3. Իրականացնել լայնածավալ աշխատանքներ և ներդնել բնականոն ուղիներ՝ աջակցելով հատուկ կարիքներ ունեցող սովորողներին ներառելու հանրակրթական հաստատություններ, վեր հանել ԿԱՊԿ ունեցող երեխաների կրթության և ներառական կրթության իրականացման բացթողումները:
4. Ապահովել մարդասիրական համամարդկային, ազգային արժեքների կանորության և անհանդուրժողականության, բուլինգի վնասակարության վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն:

Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ և միջոցառումներ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Պատասխանատուներ	Ժամանակացույց
7.1 Կազմակերպել քննարկումներ աշակերտական խորհրդի հետ դպրոցի կառավարման հարցերով /աշակերտներին անմիջապես վերաբերվող մասով/	Աշխատանքների պլանավորում, մարդկային ռեսուրսներ,	Տնօրեն, ՄԿԱ գծով համակարգող	2023-2028թթ
7.2 Ներքին կարգապահական կանոններով սահմանված վարքականոնների պահպանման նպատակով պատրաստել պաստառներ և փակցնել դպրոցում դրա համար ստեղծված անկյաունում:	ՊՈԱԿ-ի բյուջե, աշխատանքների պլանավորում, մարդկային ռեսուրսներ, պաստառներ	Տնօրեն, ՄԿԱ գծով համակարգող, դասղեկներ, հասարակագիտության ուսուցիչ	2023-2028թթ
7.3 Կազմակերպել միջոցառումներ ԿԱՊԿ ունեցող սովորողների պարտադիր մասնակցությամբ	Աշխատանքների պլանավորում, մարդկային ռեսուրսներ	Տնօրեն, ՄԿԱ գծով համակարգող, դասղեկներ, բազմամասնագիտական թիմ	2023-2028թթ
7.4 Կազմակերպել հանդիպումներ ՏՄԱԿ-ի աշխատակիցների և դասարանական ծնողական խորհուրդների հետ:	Աշխատանքների պլանավորում, մարդկային ռեսուրսներ	Տնօրեն, տնօրենի տեղակալ ՄԿԱ գծով համակարգող, ՏՄԱԿ, բազմամասնագիտական թիմ	2023-2028թթ
7.5 Դասղեկի ժամերի թեմաներում ներառել անհանդուրժողականության և բուլինգի և դրանք վերացնելու վերաբերյալ տեղեկություններ:	Աշխատանքների պլանավորում, մարդկային ռեսուրսներ	Տնօրեն, ՄԿԱ գծով համակարգող, հոգեբան, դասղեկներ,	2023-2028թթ
7.6 Համացանցի միջոցով բուլինգի երևույթների կանխարգելման միջոցառումներ:	Աշխատանքների պլանավորում, մարդկային ռեսուրսներ	Տնօրեն, ՄԿԱ գծով համակարգող, հոգեբան, ինֆորմատիկայի ուսուցիչ	2023-2028թթ

7.7 Կազմակերպել միջոցառումներ համացանցից անվտանգ օգտվելու հմտությունների ձեռքբերման և մեդիագրագիտության խթանման նպատակով:	Աշխատանքների պլանավորում, մարդկային ռեսուրսներ, համակարգիչ, պրոյեկտոր, համացանց	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծով համակարգող, ինֆորմատիկայի ուսուցիչ	2023-2028թթ
7.8 Հետևել ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան և ՆԴՎ պլաններով նախատեսված գործառույթների իրականացմանը:	Աշխատանքների պլանավորում	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծով համակարգող,	2023-2028թթ

<u>Արդյունքների գնահատման չափանիշները.</u>

- Ուսումնական հաստատությունն իրականացնում է երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր,
- Ուսումնական հաստատության զարգացման ծրագրում պլանավորված են ներառական կրթության ապահովման համապատասխան միջոցառումներ, այդ թվում՝ ուսուցիչների վերապատրաստումներ,
- ուսումնական հաստատությունն ունի ռեսուրսներ՝ աջակցելու ԿԱՊԿ ունեցող երեխաների սովորելուն, և ուսումնական միջավայրը հարմարեցված է նրանց կարիքներին,
- ուսումնական հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող ֆիզիկական խոչընդոտները (թեքահարթակ, հենակ և այլն),
- ուսումնական հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող սոցիալական խոչընդոտները (վերաբերմունք, կարծրատիպ):

Ակնկալվող արդյունքը Կունենանք որակյալ կրթական միջավայր, որը կնպաստի բոլոր սովորողների անհատական առանձնահատկություններին համապատասխան և ՀՊՉ-ով նախատեսված կարողունակությունների զարգացմանը:

Արդյունքների գնահատման սանդղակ

Գործողություն	Կատարված է			
	0-25%-ով Անբավարար	25-50%-ով Բավարար	50-75%-ով Լավ	75-100%-ով գերազանց

8. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ			
Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններ և միջոցառումներ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները	Պատասխանատուներ	Ժամանակացույց
8.1 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր կրթության ապահովում համայնքում	Մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործում	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծով համակարգող, դասղեկներ, մանկավարժներ, ծնողական խորհրդի նախագահ	2023-2028թթ օգոստոս ամիս

8.2 Ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորում և կազմակերպում	ՀՀ օրենքներ, ենթաօրենսդրային և այլ իրավական ակտեր	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծով համակարգող, մ/մ նախագահներ, դասղեկներ և մանկավարժներ,	2023-2028թթ
8.3 Ներառական կրթության ապահովում	ՀՀ օրենքներ, ենթաօրենսդրային և այլ իրավական ակտեր և ֆիզիկական հարմարեցված միջավայր	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծով համակարգող, տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոն, մ/մ նախագահներ, դասղեկներ և մանկավարժական աշխատողներ, ծնողներ	2023-2028թթ
8.4 Արտադպրոցական կրթության կազմակերպում	ՀՀ օրենքներ, ենթաօրենսդրային և այլ իրավական ակտեր, ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված ծրագրեր	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծով համակարգող, մ/մ նախագահներ	2023-2028թթ
8.5 Մանկավարժների մասնագիտական որակների բարձրացման նպատակով վերապատրաստումների և ատեստավորման ապահովում	ՀՀ օրենքներ, ենթաօրենսդրային և այլ իրավական ակտեր, ՊՈԱԿ-ի բյուջե	Տնօրեն, տնօրենի տեղակալ	2023-2028թթ
8.6 Ներդպրոցական վերահսկողության իրականացում	Դասալսումներ, տարբեր տեսակի գրավոր աշխատանքներ, ստուգարքներ, քննություններ:	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծով համակարգող, մ/մ նախագահներ, դասղեկներ	2023-2028թթ

Ցանկացած նախաձեռնություն, միջոցառումների ծրագիր կամ առհասարակ որևէ ծրագրավորված գործընթաց իր իրականացման ճանապարհին անխուսափելիորեն ենթարկվում է բազմաթիվ արտաքին և ներքին գործոնների ազդեցության, որոնք կարող են այս կամ այն կերպով խոչընդոտել նախաձեռնությանը:

Ռիսկերը ցանկացած նպատակադրման իրականացումը խոչընդոտող հնարավոր անցանկալի գործոններն են: Անհրաժեշտ է ոչ թե խուսափել ռիսկից, այլ կարողանալ զգալ այն, գնահատել, իմանալ թույլատրելի սահմանները /չի կարելի հրաժարվել փողոցն անցնելուց՝ ճանապարհային վթարից վախենալու պատճառով, այլ անհրաժեշտ է իմանալ և հետևել անվտանգության կանոններին/:

Ինքնին ռիսկերի առկայությունը չի հանդիսանում ո՛չ թերություն և ո՛չ էլ հաջողության չափանիշ: Հակառակը, ռիսկերի բացակայությունն ազդում է գործունեության դինամիկայի, առաջընթացի և արդյունավետության վրա: Ռիսկերը կարելի է կառավարել, այսինքն՝ կիրառել տարբեր միջոցառումներ, որոնք թույլ են տալիս որոշակի սահմաններում կանխատեսել ռիսկային իրադարձության տեղի ունենալը և օգտագործելով տարբեր մեթոդներ՝ չեզոքացնել կամ նվազեցնել այն:

Դպրոցի զարգացման ծրագրում հնարավոր ռիսկերի պլանավորումը կարևոր է: Առանց ռիսկերի հաշվառման ամենալավ մշակված դպրոցի զարգացման ծրագիրն անգամ դժվար է իրականացնել, քանի որ այն լիովին չի կարող արձանագրել ակնկալվող արդյունքները:

ՌԻՍԿԵՐ	ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵՂՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	
Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող շենքային պայմաններ և հարուստ նյութատեխնիկական բազա ունենալը մեծ մասամբ կապված է ֆինանսական միջոցների հետ, որը մեծ ռիսկ է ծրագրի կատարման համար:	• Ճիշտ պլանավորել ֆինանսները: • Ստեղծել արտաբյուջետային միջոցներ /ջերմատնից, արևային կայանից/: • Խնդիրները ժամանակին ներկայացնել լիազոր մարմին:
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ	
Դպրոցի կրթադաստիարակչական գործընթացին կառավարման և ծնողական խորհուրդների մասնակցության պասիվություն:	• Պարբերաբար կազմակերպել հանդիպումներ ծնողների հետ, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերը: • Համադպրոցական միջոցառումներին հրավիրել կառավարման և ծնողական խորհուրդների անդամներին:
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ	
Այս ուղղության մեծ ռիսկը աշխատանքների պլանավորման բացակայությունն է: Վերոնշյալ կազմակերպությունները օրենքների և այլ իրավական ակտերի շրջանակներում իրականացնում են իրենց լիազորությունները: Սակայն հաստատության կողմից չհամաձայնեցված գործողությունները ցանկալի արդյունք չեն տա:	• Համագործակցության տարեկան աշխատանքների պլանավորում: • Ուսուցիչների և դասղեկների տարեկան ուսումնադաստիարակչական աշխատանքներում ուսուցողական էքսկուրսիաների, թանգարանների և այլ մշակութային կենտրոններ այցելելու պլանավորում:
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ	
• Առողջ ուսումնական միջավայրի համար մեծ ռիսկ է անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտը: • Մանկավարժի ոչ արհեստավարժ մոտեցումը և վերաբերմունքը սովորողի նկատմամբ:	• Առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ ստեղծելը կառավարչի մեծագույն ձեռքբերումն է, որի համար պետք է հարգել աշխատակիցների և սովորողների իրավունքները, անձնական կյանքը, ցույց տալ յուրաքանչյուրի կարևորությունը ուսումնադաստիարակչական աշխատանքներում և ապահովել մասնակցային և բազմակարծիք կառավարում, ինչպես նաև ընդհանուր նպատակների և գաղափարների շուրջ համախմբումը:

	• Տնօրենի տեղակալի, մասնախմբերի ղեկավարների և առհասարակ արհեստավարժ մանկավարժների օգնությամբ բացահայտել առկա խնդիրները և տալ լուծումներ փորձի փոխանակման, փոխադարձ դասալսումների, մանկավարժական ժամանակակից պահանջների վերաբերյալ տեղեկատվություն ապահովելու միջոցով:
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	
• Լճացումը և երկարամյա աշխատանքային փորձ ունեցող մանկավարժների կարծրատիպերը ռիսկ են հանդիսանում մասնագիտական որակների զարգացման համար:	• Կարծրատիպերի կոտրում տարբեր սեմինարների, վեբինարների, ինչպես նաև քննարկումների, բանավեճերի և ինտելեկտուալ խաղերի կազմակերպման միջոցով: • Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների ու մոտեցումների վերաբերյալ տեղեկատվության ապահովում:
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
• Տարիքով մանկավարժների կողմից նորամուծություններին դժվար հարմարվելը: • ՏՀՏ գործիքների վատ տիրապետումը:	• Մանկավարժներին ընդգրկել տարաբնույթ վերապատրաստումների, սեմինարների, վեբինարների մեջ: • Կազմակերպել ՏՀՏ դասընթացներ դպրոցում:
ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ /ՖՈՐՍ ՄԱԺՈՐ/	
• Այդպիսի հանգամանքներ կարող են լինել պատերազմները, արտակարգ կամ ռազմական դրություն հայտարարելը, համավարակները, բնական աղետները (երկրաշարժ, ջրհեղեղ և այլն):	• Արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու հմտությունների ձեռքբերում: • Ուսումնական վարժանքների պարբերաբար անցկացում: • Հեռավար հարթակներից օգտվելու կարողությունների զարգացում:
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ	
Վերևում թվարկած բոլոր ռիսկերը ուղղակիորեն վերաբերում են հաստատության տրամադրած կրթության որակին: Ինչքան շատ գործողություններ ենք կատարում ռիսկերը մեղմելու ուղղությամբ, այնքան բարձրանում է կրթության որակը: Մեր կարծիքով ռիսկերը մեղմացնող կարևոր հանգամանքներն են՝ մասնագիտական գիտելիքները, կառավարչական հմտությունները, ճիշտ պլանավորումը, առողջ բարոյահոգեբանական մթնոլորտը, դրական օրինակը և լավատեսությունը☺:	

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Դպրոցի իրականացրած գործունեության նկատմամբ վերահսկողությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի՝ արտաքին և ներքին: Արտաքին վերահսկողությունն իրականացնում են Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Կրթության տեսչական մարմինը, լիազոր մարմինը, ըստ օրենքներով և այլ իրավական ակտերով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում՝ հաշվետվությունների, մշտադիտարկումների և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի և լիազոր մարմնի կողմից պատվիրակված այլ կազմակերպությունների միջոցով: Արտաքին վերահսկողություն են իրականացնում նաև այլ պատկան մարմիններն՝ ըստ անհրաժեշտության:

Քանի որ դպրոցի զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված դպրոցի գործունեությունն ու առաքելությունն իրականացնելու համար, վերոնշյալ պետական մարմինների կողմից իրականացվող վերահսկառողությունը կարող ենք համարել դպրոցի զարգացման ծրագրի նկատմամբ իրականացվող վերահսկողություն:

Ներքին վերահսկողությունն իրականացնում են դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները /կառավարման խորհուրդ, տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող, մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդներ/ ըստ օրենքներով և այլ իրավական ակտերով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում՝ հաշվետվությունների և այլ մշտադիտարկումների միջոցով: Կառավարման խորհուրդը լսում է դպրոցի զարգացման ծրագրի կատարման մասով տնօրենի ներկայացրած տարեկան հաշվետվությունը /Ձև 2/ և տալիս եզրակացություն, մասնակցում է դպրոցի ներքին գնահատմանը և ի շահ սովորողների աջակցում դպրոցի զարգացման ծրագրի իրականացմանը:

Դպրոցի ուսումնական պրոցեսի նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է տնօրենի կողմից կազմված ներդպրոցական վերահսկողության /ՆԴՎ/ պլանով, որը ներկայացված է Ձև 3 աղյուսակի Ներդպրոցական վերահսկողություն բաժնում:

Դպրոցն ըստ անհրաժեշտության կարող է մշակել օրենքներին և այլ իրավական ակտերին չհակասող վերահսկողության այլ մեխանիզմներ և համապատասխան իրավական ակտերով հաստատելուց հետո իրականացնել դրանք:

(Ձև 2)

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

No	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման/ առկայության դեպքում/ պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ	Նշումներ

Հաշվետվությունը պետք է ներառի յուրաքանչյուր կատարողական ցուցանիշի կատարման մասին անհրաժեշտ փաստացի տվյալներ, հիմնավորող փաստաթղթեր, վերլուծություններ, որոնք կցվում են հաշվետվության ձևաչափին:

Ներդպրոցական արտաքին վերահսկողությունն իրականացվում է տարբեր պատկան մարմինների կողմից մշակված հաշվետվությունների միջոցով, իսկ ներքին վերահսկողությունը՝ նաև դպրոցի կողմից կազմված հաշվետվությունների ձևերով:

Ստորև ներկայացնում ենք մեր կողմից մշակված մի քանի հաշվետվությունների ձևեր:

Տնօրինության կողմից 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվող գրավոր աշխատանքների ամփոփիչ արդյունքները

Թիվ	Օրը,ամիսը,տարեթիվը	Դաս.	Առարկա	Աշակերտների թիվ			Ուսուցչի անունը, ազգանունը	Գրավորի տեսակը	Գնահատականները										Առաջ. %	Որակ %
				ը	ն	բ			10	9	8	7	6	5	4	3	2	1		
1.																				

2023-2024 ուսումնական տարվա առարկայական պետական ծրագրերի կատարողականի ուսումնասիրություններ

Թիվ	Օրը,ամիսը, ամսաթիվ	Ուսուցչի անունը, ազգանունը,	Առարկան	Դաս.	Ուսպլանով տարեկան ժամերը	Պետ.ուս.ծրագրի կատարողականն ըստ կիսամյակների		
						I	II	ընդ. /ժ
1.								

Ստուգեց՝ ----------տնօրենի տեղակալ / /

2023-2024 ուստարվա կատարած աշխատանքների

Ուսուցչի հաշվետվություն

Ուսուցիչ՝ ----------

Ամիս ,ամսաթիվ՝ ----------

Առարկա	Դասարան	Աշակերտների թիվ		ԿԱՊԿՈՒ աշակերտ	Տարեկան ժամաքանակ			Թեմատիկ գրավոր աշխատանք	Գործնական աշխատանք
		տարեսկիզբ	տարեվերջ		1-ին կիսամյակ	2-րդ կիսամյակ	Ընդամենը		

Հետազոտական աշխատանք	Նախագծային աշխատանք	Բաց դասեր	մ/մ նիստի մասնակցություն	մ/խ նիստի մասնակցություն	Սեմինար, վեբինար, վերապատրաստում, ատեստավորում	Ծնողական ժողով	Դասալսումներ	Դասղեկի ժամ	Միջոցառումներ	էքսկուրսիաներ

ԱՄԵՆՕՐՅԱ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Դասարան	01.01	02.01	03.01	04.01	05.01	06.01	07.01	08.01	09.01	10.01	11.01	12.01	13.01	14.01	15.01	16.01	17.01	18.01	19.01	20.01	21.01	22.01	23.01	24.01	25.01	26.01	27.01	28.01	29.01	30.01	31.01
I																															
II																															
III																															
IV																															
V																															
VI																															
VII																															
VIII																															
IX																															
X																															
XI																															
XII																															
Ն/Դ																															
ԸՆԴ.																															

2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հ/հ	Դասարան	I կիսամյակ	II կիսամյակ	ընդամենը
1				

ՏԱՐԵԿԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

Հ/Հ	դասղեկ	դասարան	Ա2.թիվ տարեսկիզբ	Ա2.թիվ տարեվերջ	ընդ. ա2.	տեղ.ա2.	գնահատված	անբավարար չունեն	անբավարար ունեն	1-2 առարկայից	3 և ավելի առարկա	գերազանցիկ	հարվածային	առաջադիմ. %
1														

ԴԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

N	ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	0 շատ վատ	1 վատ	2 բավարար	3 լավ	4 շատ լավ	5 գերազանց
1.	Դասի հիմնական նպատակներն ու խնդիրները հստակ են ձևակերպված						
2.	Դասի կառուցվածքային փուլերը տրամաբանորեն շաղկապված են						
3.	Դասին օգտագործվում են նպատակահարմար մեթոդներ,հնարներ և միջոցներ						
4.	Դասարանը ներգրավված է դասապրոցեսին						
5.	Սովորողների գիտելիքները խորն են,կայուն ու բազմակողմանի						
6.	Առաջադրանքները տրվում են հստակ,իսկ դրանց ստուգումը հետևողական է						
7.	ՈՒսուցանվող նյութը,հասկացություններն ու եզ-րույթները մատուցվում են պարզ ու մատչելի						
8.	Նորի հաղորդումը հիմնավոր է ու հետաքրքիր						
9.	ՈՒսուցիչը խթանում է սովորողների մտածո-ղությունը,ուղղորդում նրանց գործունեությունը						
10.	Խրախուսվում են սովորողների ճանաչողական հետաքրքրասիրությունները						
11.	Խթանվում է սովորողի ինքնուրույն և տրամաբա-նական մտածողությունը						
12.	Ստեղծվում են ներառարկայական և միջառարկա-յական կապեր						
13.	Մեջբերումները տեղին են ու նպատակային						
14.	Դասը արդի է,օգտագործվում են ՏՀՏ-ներ						
15.	Ապահովվում է հետադարձ կապ						
16.	Օգտագործվում են գնահատման զանազան ձևեր, գնահատականները տեղին են ու հիմնավոր						
17.	Դասարնը կառավարվում է հմտորեն ու բարձր կուլտուրայով						
18.	ՈՒսուցչի խոսքը գրագետ է , լսելի , հասկանալի , նպատակամետ ու տրամադրող						
19.	Դասաժամն օգտագործվում է արդյունավետ ու նպատակային						
20.	Դասի պլանը համապատասխանում է արդի պահանջներին						

0-30 միավոր՝ *շատ վատ*, 31-40 միավոր՝ *վատ*, 41-60 միավոր՝ *նվազ բավարար*,
61-70 միավոր՝ *միջին* , 71-80 միավոր ՝ *լավ*, 81-90 միավոր ՝ *շատ լավ* ,
91-100 միավոր՝ *գերազանց*

Ուսուցիչների վերապատրաստումների, դասընթացների, կարողությունների զարգացման ծրագրերի, նախագծերի մասնակցության հաշվետվություն

2023-2024 ուստարի

N	Անուն,Ազգանուն	Առարկա	Թեմա	Ժամկետ	Կազմակերպության անվանում
1					

ԲԱՑ ԴԱՍԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2023-2024 ուստարի

I կիսամյակ

N	Ուսուցիչ	Առարկա	Դասարան	Թեմա	Դասի տիպ/տեսակ	Ժամկետ	Ծանոթություն
1							

Հատկորոշիչներ

Ուսումնական առարկան- - 05 միավոր

Հարցաշարի համարը- - 1 միավոր

Տարատեսակը- - 2 միավոր

Դասարանը- - 3 միավոր

Ծրագրային թեման-

Նախատեսված ժամանակը- Գնահատման բանաձևը- n=(s/m)*10

Առաջադրանքների քանակը- որից՝ n-ը գնահատականն է

Առաջադրանքների առավելագույն միավորը- s-ը հավաքած միավորը

որից՝ m-ը առավելագույն միավորը:

(Ձև 3)

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Ելնելով շենքային պայմաններից ուսումնական պարապմունքները կազմակերպել մեկ հերթով:	Օգոստոս	Տնօրեն	
2	Ձևավորել դասարանները. ա) տարրական դպրոց դասարաններ բ) հիմնական դպրոց դասարաններ գ) ավագ դպրոց դասարաններ:	Օգոստոս	Տնօրեն	
3	Նշանակել դասղեկներ և դասվարներ:	Օգոստոս	Տնօրեն	
4	Նշանակել և մանկավարժական խորհրդին ներկայացնել առարկայական մասնախմբերի նախագահներին:	20.08 – 30.08	Տնօրեն, մանկավարժական խորհուրդ	
5	Նշանակել և հրամանագրել դասղեկներ, խմբակների ղեկավարներ:	Օգոստոս	Տնօրեն	
6	Ստեղծել աշխատանքային բարենպաստ պայմաններ դպրոցի խորհրդակցական մարմիններում աշխատանքները նորմալ կազմակերպելու համար:	Մշտապես	Տնօրեն	
7	Ուսումնական մասնաշենքի յուրաքանչյուր հարկում, բակում, ձևավորված սրահներում կազմակերպել ամենօրյա հերթապահություն:	Մշտապես	Տնօրեն, ՄԿԱ գծ. համակարգող,	
8	Նշանակել օրվա պատասխանատուներ, պահանջել հերթապահներից. • Հսկել և իրականացնել օրվա հերթապահությունը ուսումնական մասնաշենքերում, • Կազմակերպել տվյալ օրվա ուսումնական ողջ գործընթացը, • օրվա վերջում աշխատանքային գործընթացի մասին զեկուցել տնօրենին:	Մշտապես	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծ. համակարգող,	

9	Սահմանել կարգ. 1. Յուրաքանչյուր աշխատող աշխատանքի ներկայանա ըստ «Աշխատանքային ժամանակացույցի»՝ հիմք ընդունելով «Ներքին կարգապահակն կանոնները»: Ուսուցիչների հաճախումների հաշվառման պարտականությունները դնել տնօրենի ուս. գծով տեղակալ վրա:	Մշտապես	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծ. համակարգող,	
10	Սահմանել վարչական անձնակազմի աշխատանքային ռեժիմը, արտահայտել «Աշխատանքային ժամանակացույցում»:	Օգոստոս	Տնօրեն	
11	Հետևել, որպեսզի դասղեկները և կաբինետի վարիչները պատասխանատվություն կրեն գույքի և անվտանգության կանոնների պահպանման համար:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն	
12	Հետևողական լինել դպրոցական շենքի պահպանմանը, տնտեսական կարիքները հոգալուն, հակահրդեհային միջոցառումները իրականացնելուն, էլեկտրական գծերն ու սարքավորումներն անվտանգ պահելուն, դպրոցական սննդի կազմակերպմանը:	Մշտապես	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող,	
13	Հետևել դպրոցամերձ հողամասի, ծառերի պահպանման և խնամքի աշխատանքներին	Մշտապես	Վարչատնտեսական մասի համակարգող, այգեպան, դասղեկներ	
14	Հսկողության տակ պահել ջերմատան աշխատանքները	Մշտապես	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող, այգեպան,	
15	Դասասենյակները, կաբինետները, ուսումնական գույքը և սարքավորումները նախապատրաստել նոր ուստարվան:	Օգոստոս	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող,	
16	Վերանորոգել աշակերտական դասագրքերը:	Հունիս - օգոստոս	Դասղեկներ, գրադարանավար	
17	Ձևավորել էլեկտրոնային դասամատյանները:	Օգոստոս	Համ. օպերատոր	
18	Անցկացնել տնօրենին կից խորհրդակցություններ:	Շաբաթը մեկ անգամ	Տնօրեն	

19	Կազմակերպել աշակերտների ինքնակառավարման աշխատանքները՝ ըստ դպրոցի աշակերտական կանոնադրության:	Սեպտեմբեր	Տնօրեն, ՄԿԱ գծ. համակարգող,	
20	Համալրել ուսուցչական կազմը և կատարել դասաբաշխում:	Մշտապես	Տնօրեն	
21	Հաշվառել գրադարանային ֆոնդի օգտագործման պիտանի դասագրքերը:	Հունիս	Գրադարանավար	
22	Դասղեկների հետ ճշտել սոցիալապես անապահով, որբ և միակողմանի ծնողազուրկ երեխաների ցուցակը և հնարավորության սահմաններում ապահովել անվճար դասագրքերով:	Սեպտեմբեր	Տնօրեն, ՄԿԱ գծ. համակարգող, դասղեկներ, ծնողական խորհուրդ	
23	Կազմակերպել կոնսուլտացիոն պարապմունքներ ամառային առաջադրանքներ ստացած աշակերտների հետ, ժամանակին և կազմակերպված ընդունել ամառային առաջադրանքները:	20.08 – 30.08	տնօրենի տեղակալ	
24	Դպրոցական շենքը նախապատրաստել նոր ուսումնական տարվան:	25.08 – 30.08	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող,	

ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Անցկացնել 4,5,6 տարեկան երեխաների հաշվառում դպրոցի սպասարկման տարածքում:	Մարտ	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծ. համակարգող, ուսուցիչներ	
2	Հնարավորության սահմաններում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովել դասագրքերով և գրենական այլ պիտույքներով:	Սեպտեմբեր	Տնօրեն, ՄԿԱ գծ. համակարգող	

3	Կատարել միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաների հաշվառում: Ծնողական խորհրդի միջոցով հայթայթել գումար և օգնել նրանց:	Սեպտեմբեր	Տնօրեն, ՄԿԱ գծ. համակարգող, ծնողխորհուրդ	
4	Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք, առկայության դեպքում առաջնորդվել օրենքով սահմանված կարգով:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ՄԿԱ գծ. համակարգող	
5	Ուշադրության կենտրոնում պահել ԿԱՊԿՈՒ աշակերտներին, որպեսզի բոլորն էլ հավասարապես օգտվեն կրթության իրավունքից:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծ. համակարգող, դասղեկներ, բազմամասնագիտական թիմ	
6	Աշխատանք տանել 5-12 –րդ դասարանների դժվար դաստիարակվող երեխաների և նրանց ծնողների հետ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ՄԿԱ գծ. համակարգող,դասղեկներ, հոգեբան	
7	Պարտադիր ուսուցման գործընթացի իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին, ծնողական խորհուրդներին:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ՄԿԱ գծ. համակարգող, դասղեկներ	
8	Թույլ առաջադիմություն ունեցող աշակերտներին՝ ըստ նրանց ընդունակությունների ու հետաքրքրությունների, ընդգրկել երկարօրյա խմբակներում, ակումբներում:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծ. համակարգող, հոգեբան	
9	Արտաբյուջետային միջոցները ներդնել ուսումնական պրոցեսի արդյունավետության բարձրացման նպատակով:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, , ՄԿԱ գծ. համակարգող, ծնողխորհուրդ	
10	Երեխաներին ծանոթացնել դպրոցի ներքին կարգապահական կանոններին, ինչպես նաև իրենց իրավունքներին ու պարտականություններին: Ստեղծել ջերմ մթնոլորտ ուսումնական գործընթացը բարեհաջող սկսելու համար:	Օգոստոս	Տնօրեն, ՄԿԱ գծ. համակարգող	

	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Ուսուցիչներին ժամանակին ապահովելու ուսումնական ծրագրերով և երաշխավորված մեթոդական ուղեցույցներով:	Օգոստոս	Տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծ. համակարգող, առարկայան մասնախմբեր	
2	Ուսումնական առարկաների դասավանդումը բարելավելու նպատակով հարստացնել դպրոցի ուսումնանյութական բազան, օգտագործել առկա տեխնիկական միջոցների ողջ հզորությունը:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող,	
3	Աշխատանք տանել կաբինետները և դասարանները անհրաժեշտ նյութերով ու սարքավորումներով կահավորելու ուղղությամբ:	Օգոստոս-սեպտեմբեր	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող,	
4	Ուսուցիչների համար կազմակերպել համակարգչային դասընթացներ, նրանց սովորեցնել համակարգչով աշխատել:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ինֆորմատիկայի ուսուցիչ	
5	Ստեղծել մասնագիտական կողմնորոշման խմբակ՝ աշակերտների մասնագիտական կողնորոշումը ճիշտ նպատակաուղղելու համար:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ՄԿԱ գծ. համակարգող, հոգեբան	
	Կազմակերպել երկարօրյա ուսուցում	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ՄԿԱ գծ. համակարգող,	
6	Սովորողների կրթության որակը բարձրացնելու նպատակով կատարել նպատակային դասալսումներ, առաջարկություններն ու դիտողությունները գրանցել նաև ուսուցիչների աշխատանքային գործունեությունը բնութագրող՝ «Դիտողությունների և առաջարկությունների գրանցման» մատյանում:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ	

7	Կատարել առարկայական ուսումնասիրություններ, արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերի նիստերում, տնօրինության խորհրդակցություններում, մանկավարժական խորհրդում: Ուսումնասիրել՝ ա)առարկայի դրվածք /1 -12 րդ դասարաններում/, բ) ՏՀՏ-ի օգտագործում դասերին, գ) նոր ծրագրերի և չափորոշչային պահանջների իրականացում:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մասնախմբերի նախագահներ	
8	Ուսումնասիրել լաբորատոր գործնական աշխատանքների ծրագրային պահանջների կատարման ընթացքը բնագիտական առարկաներից:	Դեկտեմբեր, մայիս	Տնօրենի տեղակալ	
9	Կազմակերպել առարկայական շաբաթներ, միամսյակներ: ա)կազմակերպել ցերեկույթներ, բաց դասեր, բ)լույս ընծայել պատի թերթեր, գ)հրավիրել մասնագետներ տարբեր ուսումնական հաստատություններից:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծ. համակարգող, մասնախմբերի նախագահներ, ուսուցիչներ	
10	Ավագ դպրոցում կազմակերպել քննարկումներ աշակերտների և ուսուցիչների մասնակցությամբ:	Հունվար, ապրիլ	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծ. համակարգող,	
11	Անցկացնել դպրոցական օլիմպիադաներ: Առարկայական օլիմպիադաններին նախապատրաստվել ուստարվա սկզբից:	Դեկտեմբեր	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մասնախմբերի նախագահներ	
12	Անցկացնել տարաբնույթ մրցույթներ և վիկտորինաներ:	Դեկտեմբեր	ՄԿԱ գծ. համակարգող,	
13	Հայտնաբերել օժտված երեխաներին, տալ առարկայական խորը և կայուն գիտելիքներ, մղել նրանց ստեղծագործական, որոնողական աշխատանքի:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծ. համակարգող, մասնախմբերի նախագահներ, ուսուցիչներ	
14	Հիմք ընդունելով աշակերտների ցանկությունները և ծնողների համաձայնությունը՝ կազմակերպել նախասիրական պարապմունքներ տարբեր առարկաներից՝ կնքելով ծնողների հետ համապատասխան պայմանագիր:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծ. համակարգող,	

ԴԱՍՂԵԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ				
15	Օգնել դասղեկներին կազմելու դաստիարակչական աշխատանքների աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծ. համակարգող,	
ա/	Դասղեկներից պահանջել՝ աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները. 1.ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ, 2.աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն, 3. դաստիարակության հիմքում դնել միջնակարգ հանրակրթական դպրոցի հանրակրթական նոր չափորոշչով սահմանված շրջանավարտի նկարագրի պահանջները:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ՄԿԱ գծ. համակարգող, դասղեկներ, դասվարներ	
բ/	Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և այն ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծ. համակարգող, դասղեկներ, դասվարներ	
գ/	Հետևողական աշխատանքի միջոցով հնարավորինս նվազեցնել անհարգելի բացակայությունները:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ՄԿԱ գծ. համակարգող, դասղեկներ, դասվարներ	
դ/	Կարգի համաձայն հրավիրել դասարանական ծնողական ժողովներ: Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ – դպրոց – ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժական և հոգեբանական թեմաներով զեկուցումներ:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծ. համակարգող, հոգեբան, դասղեկներ, դասվարներ	
ե/	Յուրաքանչյուր դասարանում ստեղծել ծնողխորհուրդ (բաղկացած 3 հոգուց), ապահովել ծնողխորհրդի մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը:	Սեպտեմբեր ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծ. համակարգող, դասղեկներ, դասվարներ	
զ/	Սահմանել բաց դռների օր, ապահովել ծնող – ուսուցիչ կապը:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծ. համակարգող, դասղեկներ, դասվարներ	

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ				
16 ա)	Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ՄԿԱ գծ. համակարգող, դասղեկներ, դասվարներ	
բ)	Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները, կազմակերպել գեղարվեստական միջոցառումներ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ՄԿԱ գծ. համակարգող, դասղեկներ, դասվարներ	
գ)	Զարդարել դասասենյակներն ու միջանցքները: Ստեղծել վահանակներ:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծ. համակարգող,	

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ				
17 ա)	Սովորողների ֆիզիկական դաստիարակության բարելավման նպատակով մարզադահլիճը հնարավորության պայմաններում հարստացնել մարզական գույքով:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող	
բ)	Կանոնավոր կերպով անցկացնել լիցքային վարժությունները, առողջարարական դասամիջոցները և մարմնամարզական րոպեները:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծ. համակարգող, ուսուցիչներ	
գ)	Ստեղծել մարմնամարզական խմբակներ տարբեր մարզաձևերից:	Սեպտեմբեր	ՄԿԱ գծ. համակարգող, ուսուցիչներ	
դ)	Պարզել աշակերտների առողջական վիճակը, ստեղծել ֆիզկուլտուրայի հատուկ խմբեր, հետևել պարապմունքների անցկացմանը:	Սեպտեմբեր	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծ. համակարգող	
ե)	Դասավորել դեղատուփը, ձեռք բերել անհրաժեշտ դեղամիջոցներ:	Սեպտեմբեր	Վարչատնտեսական մասի համակարգող, ՄԿԱ գծ. համակարգող	
զ)	Կազմակերպել սպորտլանդիաներ կրտսեր և միջին դպրոցում:	Նոյեմբեր, ապրիլ	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծ. համակարգող, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ	
է)	Պարբերաբար կազմակերպել աշակերտների կողմից մարզական նորմատիվների հանձնում:	Սեպտեմբեր, մայիս	Տնօրեն, տնօրենի տեղակալ,	

			ֆիզկուլտուրայի ուսուցիչներ,	
ը)	Անցկացնել միջդասարանական, միջդպրոցական մրցումներ: Այն կազմակերպել բարձր մակարդակով, նախապես իրազեկ դարձնել դասղեկներին և աշակերտներին:	Հոկտեմբեր, մայիս	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծ. համակարգող, զինղեկ, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ, դասղեկներ	
թ)	Խստորեն վերահսկել սպորտդահլիճում, լաբորատորիաներում անվտանգության և սանիտարական կանոնների պահպանմանը:	Մշտապես	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող, ՄԿԱ գծ. համակարգող, ուսուցիչներ	
ժ)	Պարբերաբար հետևել ուսումնական գործընթացի հիգենային, պահպանել դասացուցակների կազմման և տնային աշխատանքների ծավալների անհրաժեշտ պահանջները:	Մշտապես	Տնօրեն, տնօրենի տեղակալ	
ի)	Անցկացնել զրույց բարձր դասարանների սովորողների օրվա ռեժիմի, անձնական հիգենայի մասին:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ՄԿԱ գծ. համակարգող, դասղեկներ	
լ)	Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել «Առողջության օր»: Դպրոց հրավիրել բժիշկներ՝ տարբեր մասնագիտությունների գծով: Կազմակերպել զրույց– զեկուցումներ աշակերտների շրջանում:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ՄԿԱ գծ. համակարգող	

Աշխատանքային դաստիարակություն				
19 ա)	Բարձրացնել աշխատանքային դաստիարակության, աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների որակը:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, ՄԿԱ գծ. համակարգող, ուսուցիչներ	
բ)	Դպրոցամերձ հողամասի մշակման և ծառերի խնամքի աշխատանքները	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծ. համակարգող	

	կատարել աշակերտների միջոցով, սեր արթնացնել դեպի աշխատանքը :		դասղեկներ, այգեպան	
գ)	Աշակերտների ուժերով կազմակերպել դպրոցում աճեցվող ծաղիկների խնամքի գործը: Հոգ տանել, որպեսզի ծաղիկներով ու կանաչ բույսերով կահավորեն կաբինետները, միջանցքներն ու սրահները:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծ. համակարգող, դասղեկներ	

ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ				
18 ա)	Կազմակերպել հանդիպումներ հայկական բանակի հրամանատարների, զինվորների, Արցախի ինքնապաշտպանական մարտերի մասնակիցների հետ:	Ուստարվա ընթացքում	Զինղեկ, պատմության ուսուցիչ	
բ)	Այցելություն Հայրենական Մեծ և Արցախյան պատերազմներում, Հայաստանի և Արցախի սահմանների պաշտպանության համար զոհված մարտիկների հուշարձաններին:	Սեպտեմբեր, մայիս	ՄԿԱ գծ. համակարգող, դասղեկներ, զինղեկ	
գ)	Անցկացնել «Քաղաքացիական պաշտպանության օրը դպրոցում» միջոցառումը: Աշխատանք տանել ոչ ռազմականացված խմբավորումների հետ:	մշտապես	Տնօրեն, զինղեկ	

ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
1	Ուսումնական տարվա սկզբից կատարել աշխատանքի բաժանում՝ ուշադրություն դարձնելով յուրաքանչյուրի աշխատանքի շրջանակներին:	Օգոստոս	Տնօրեն	
2	Ստուգել և հաստատել ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը /ՈՒԴԱՊ/, տնօրենի տեղակալների, դասղեկների, ուսուցչի օգնականների, հոգեբանի տարեկան աշխատանքային պլանները և ուսուցիչների տարեկան թեմատիկ պլանավորումները:	Օգոստոս	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծ. համակարգող	
3	Ուսումնական տարվա սկզբից ունենալ ուսուցիչների բացակայությունների հաշվառման մատյան:	Օգոստոս	Տնօրեն, տնօրենի տեղակալ	
4	Հետևել, որ դասաժամերի բացթողումները լրացվեն լրացուցիչ պարապմունքների միջոցով:	Մշտապես	Տնօրեն, տնօրենի տեղակալ	
5	Հայտ ներկայացնել ՏՄԱԿ-ին մանկավարժահոգեբանական աջակցության և տարածքային մակարդակի կարիքի գնահատման համար	Սեպտեմբեր	Տնօրեն	
6	Յուրաքանչյուր շաբաթվա վերջում գումարել տնօրինության նիստ, վերլուծել շաբաթական պլանները. ա) Լսել տնօրինության անդամների հաղորդումը շաբաթական պլանների կատարողականի մասին: Բացահայտել աշխատանքում տեղ գտած թերությունները: բ) Քննարկել հաջորդ շաբաթվա աշխատանքային ծրագրերը:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն	

7	Յուրաքանչյուր ամսվա վերջին տնօրինության նիստում քննարկել սովորողների հաճախումների հարցը:	Մշտապես	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծ. համակարգող,	
8	Ստուգել պարտադիր կրթության օրենքի սահմանադրական պահանջի կատարման վիճակը դպրոցում և արդյունքները քննարկել տնօրինության նիստում և մանկավարժական խորհրդում:	Սեպտեմբեր	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծ. համակարգող,	
9	ա) Ավարտական դասարանների սովորողների գիտելիքներին, կարողություններին ու հմտություններին ծանոթանալու նպատակով տարեկան 2 անգամ անցկացնել ստուգողական գրավոր աշխատանքներ: բ) Գրավոր աշխատանքների արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերում և մանկավարժական խորհրդի նիստում:	Դեկտեմբեր, ապրիլ	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մասնախմբերի նախագահներ	
10	Ստուգել լաբորատոր և գործնական աշխատանքների կատարման վիճակը բնագիտական առարկաներից:	Հոկտեմբեր, ապրիլ	Տնօրենի տեղակալ	
11	Ստուգել տարբեր առարկաներից տրված ուսուցողական և ստուգողական աշխատանքների քանակը և որակը: Արդյունքները քննարկել մանկավարժական խորհրդի նիստում:	Կիսամյակի վերջում	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծ. համակարգող, մասնախմբերի նախագահներ	
12	Ստուգել ուսումնական ծրագրերի կատարողականը և արդյունքները քննարկել տնօրենության ընդլայնված նիստերում:	Դեկտեմբեր, ապրիլ	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծ. համակարգող, մասնախմբերի նախագահներ	
13	Ստուգել էլեկտրոնային դասամատյանների, աշակերտական օրագրերի ու տետրերի վարման վիճակը:	Շաբաթը մեկ անգամ	Տնօրենի տեղակալ, դասղեկներ	
14	Ստուգել դժվար առաջադիմող, ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվող աշխատանքները, քննարկել տնօրենության ընդլայնված նիստերում:	Հոկտեմբեր, մարտ	Տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծ. համակարգող	
15	Գիտելիքների ստուգում կազմակերպել տարրական դպրոցում /4 –րդ դասարանում/:	Դեկտեմբեր , ապրիլ	Տնօրենի տեղակալ,	
16	Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքը: Արդյունքները քննարկել դասղեկների հետ տնօրինության ընդլայնված նիստում:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծ. համակարգող	

Այսպիսով՝ սույն զարգացման ծրագրի հիմնական նպատակն է՝ ապահովել հանրակրթության բնագավառում պետության երաշխավորած հետևյալ սկզբունքների ապահովումը.

1) հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.

2) հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին.

3) հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը.

4) ուսումնական հաստատությունում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը.

5) հանրակրթության որակի շարունակական բարելավումը, միջազգային չափանիշներին համապատասխանությունը, ինչպես նաև միջազգային կրթական համակարգին ինտեգրումը.

6) ուսումնական հաստատության ինքնավարության և պետական վերահսկողության հավասարակշռումը.

7) ուսումնական հաստատության սովորողների ու աշխատողների իրավահավասարությունը:

2023-2028թվականների զարգացման ծրագրում տեղ գտած բոլոր դրույթներն իրատեսական են, իրագործելի, վերջնարդյունքները՝ չափելի, որոնք ապահովելու են նախորդ՝ 2018-2023 թվականների զարգացման ծրագրով նախատեսված և կատարված աշխատանքների տրամաբանական շարունակությունը։

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ …